

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով, ՀՀ Նախագահի
հրամանագրով, ՀՀ կառավարության որոշումներով ու իրավական ակտերով՝
Գեղարքունիքի մարզպետարանը 2016 թվականին որոշակի աշխատանքներ է
կատարել մարզի կենսագործունեության ապահովման, մարզի առջև ծառացած
սոցիալ-տնտեսական հիմնահարցերի լուծման, բնակչության կենսամակարդակի
բարձրացման, կյանքի որակի բարելավման, համախառն ներքին արդյունքի աճի
ապահովման ուղղություններում:

*2016 թվականի սոցիալ-տնտեսական տարում նկատելի ձեռքբերումներ են
արձանագրվել գյուղատնտեսության ոլորտում. Համաձայն ՀՀ ազգային
վիճակագրական ծառայության մարզային գործակալության նախնական տվյալների՝
մարզի գյուղատնտեսության համախառն արտադրանքը կապահպանի նախորդ
տարվա ցուցանիշը, որը կազմում է շուրջ 190 մլրդ.դրամ: Կապված անբարենպաստ
բնակլիմայական պայմանների հետ/ հուլիս -օգոստոս- սեպտեմբեր ամիսներին տեղի
ունեցած ուժեղ կարկտահարության պատճառած վնասների/ Կարտոֆիլի համախառն
արտադրությունը 2015 թվականի համեմատությամբ նվազել է է 10.4 տոկոսով
հացահատիկինը՝ 25.6 իսկ բանջարեղենինը՝ 2,4 տոկոսով:*

Ըստ նախնական տվյալների՝ 1-ից 2 տոկոս աճ է ապահովվել անասնապահական
մթերքների՝ մսի, կաթի, բրդի, մեղրի արտադրության ուղղությամբ:
Ձեռքբերումները գյուղատնտեսության աշխատողների հետևողական աշխատանքի և
ՀՀ կառավարության կողմից մարզի հողօգտագործողներին ցուցաբերված
աջակցության ծրագրերի արդյունքն են:

Հաշվետու ժամանակահատվածում ՀՀ կառավարության կողմից մարզին
հատկացվել է 928 հազար 300 լիտր սուբսիդավորված դիզելային վառելիք, 5463.1
տոննա ազոտական, 61.9 տոննա ֆոսֆորական և 76.5 տոննա կալիումական
պարարտանյութեր, 260 տոննա գարնանացան գարու և 1 տոննա առվույտի
բարձրորակ սերմեր: ՀՀ կառավարության կողմից ցուցաբերված աջակցության
ծրագրերի, ինչպես նաև գյուղացիական տնտեսությունների նպատակամղված
աշխատանքի արդյունքում մարզում հողօգտագործման արդյունավետությունը
կազմում է 95.3 տոկոս:

2016 թվականին մարզում արտադրվել է ավելի քան 107,1 հազար տոննա հացահատիկ, 324,5 հազար տոննա կարտոֆիլ, 63.4 հազար տոննա բանջարեղեն, 20 հազար տոննա պտուղ, կուտակվել է 360,3 հազար տոննա խոտ:

Զգալիորեն ավելացել է խոշոր, մանր եղջերավոր անասունների գլխաքանակը, գյուղատնտեսական կենդանիների մթերատվությունը: Մարզում լուրջ ուշադրություն է դարձվել արոտավայրերի ջրաբքիացմանը, հեռագնա արոտավայրերի արդյունավետ օգտագործմանը: 2016 թվականին՝ 2015 թվականի համեմատությամբ, խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակն ավելացել է 3891, մանր եղջերավոր անասուններինը՝ 200 գլխով:

Հողի, գյուղատնտեսական տեխնիկայի արդյունավետ օգտագործման, գյուղատնտեսական մթերքների ինքնարժեքի իջեցման գործում կարևոր հիմնախնդիր է հողերի կամավոր միավորոտումը և գյուղատնտեսական կոոպերատիվների ստեղծումը, ինչն իր լուծումն է ստանում ՀՀ *գյուղատնտեսության նախարարության <<Համայնքների գյուղատնտեսական ռեսուրսների կառավարման և մրցունակության>> ծրագրի շնորհիվ* 2014-2016 թվականների ընթացքում մարզի տարբեր տարածաշրջաններում կազմակերպվել են շուրջ 42 կոոպերատիվներ, որոնք արդյունավետ և ուսանելի գործունեություն են ծավալում մարզում: 2016 թվականին մարզի 22 համայնքներում իրականացված ծրագրերի շնորհիվ ջրաբքիացվել է ավելի քան 11000 հեկտար արոտավայրեր, կառուցվել է 34 կիլոմետր ջրագիծ, 22 խմոց, հատկացվել է 36 անվավոր տրակտոր, 134 միավոր գյուղատնտեսական տարբեր գործիքներ: Ընթացքի մեջ են և 2017 թվականին կիրականացվեն 34.3 կմ. Ջրագծի, 14 խմոցի և 7000 հեկտար արոտների ջրաբքիացման աշխատանքները: Այսուհանդերձ, ձեռքբերումները պահանջում են դինամիկ զարգացում և շարունակություն, քանի որ մարզի զարգացման գերակա ուղղությունը եղել և մնում է գյուղատնտեսությունը: Ուստի գյուղատնտեսության արմատական առաջընթացի և արդիականացման համար 2017 թվականին մեր առջև ծառացած են մի շարք հիմնախնդիրներ, որոնց լուծումը պահանջում է ծանրակշիռ մոտեցումներ, լուրջ ներդրումներ: Գյուղատնտեսության դինամիկ զարգացումն ապահովելու նպատակով հարկավոր է մարզում ոռոգելի հողերի տարածքը առկա 12300 հեկտարից հասցնել մինչև 20.000 հեկտարի, լուրջ ուշադրություն դարձնել բարձր վերարտադրության սերմերի և տնկանյութերի ներկրմանը, աջակցել կարտոֆիլի, հնդկացորենի, կտավատի, չիչխանի, գետնախնձորի վերամշակման գործարանների ստեղծմանը՝ լուծելով գյուղացիական տնտեսությունների բերքի իրացման հետ կապված խնդիրները, թարմացնել համայնքների գյուղատնտեսական տեխնիկայի շարժակազմը, ավելացնել հատկապես հացահատիկահավաք կոմբայնների թվաքանակը, որի պակասն այժմ զգալի է: Ամենալուրջ հիմնախնդիրը, թերևս, սննդամթերքի անվտանգության, անասնաբուժական ծառայությունների գործունեության ընդլայնման ու կանոնակարգման խնդիրն է: Այս ոլորտում վերջին տարիներին իրականացված փոփոխությունների արդյունքում մասնագիտական ծառայություններ իրականացնող նախկին կառույցներին փոխարինել են ընդամենը համայնքներում պետության կողմից պատվիրակված լիազորություններ իրականացնող անասնաբույժ մասնագետներ, որոնց գործունեությունը սահմանափակվում է միայն անասնաճամառակների դեմ պատվաստումներ

իրականացնելով: Մինչդեռ անասնաբուծությունն ավելի ընդգրկուն հասկացություն է, կարևոր ճյուղ, առանց որի անհնար է պատկերացնել ոլորտի հետագա զարգացումը:

Բնապահպանության ոլորտում հիմնախնդիրներն էապես կապված են Սևանա լճի էկոհամակարգերի վերականգնման ու պահպանման հարցերի հետ: Սևանա լիճը տարածաշրջանի քաղցրահամ ջրերի ամենամեծ շտեմարանն է, որն ապահովում է ինչպես կենցաղային խմելու ջրի, այնպես էլ՝ ոռոգման և արդյունաբերական կարիքների զգալի մասը, այն համարվում է Հայաստանի հիմնական հանգստյան գոտիներից մեկը և մեծ նշանակություն ունի զբոսաշրջության զարգացման համար: Միաժամանակ Սևանա լիճը ավիամերձ բնակավայրերի բնակչության եկամուտների կարևորագույն աղբյուրներից է:

Սևանա լճում ձկնային պաշարների վերականգնման ուղղությամբ 2016 թվականին «Սևանի իշխանի պաշարների վերականգնման և ձկնաբուծության զարգացման» ծրագրի շրջանակներում Կարճադբյուր համայնքում արդեն կառուցվել և գործում է գերժամանակակից սարքավորումներով հագեցած ձկնաբուծարան: Իր արտադրողականությամբ գործարանը մի քանի անգամ կգերազանցի ԽՍՀՄ տարիներին Սևանա լճի ավազանում գործող չորս մանրածկան գործարանների արտադրողականությունը: 2016 թվականի վերջերի դրությամբ ստեղծվել է Սևանի իշխանի 6100 հատ մայրական կազմ: Ավարտական փուլում է գտնվում ձկան վերամշակման գործարանի կառուցումը, որտեղ տարեկան կվերամշակվի 6-8 հազար տոննա ձուկ: Այս պահին լճում տեղադրված են 12 օդակաձև ցանցավանդակներ 25 մետր տրամագծով, որտեղ արդեն կան մոտ 50 տոննա <<գեղարքունի>> և <<ամառային իշխանի>> արդյունագործական պաշար: Վերջնական արդյունքում տարեկան կարտադրվի 50 հազար տոննա ձուկ:

<<Սևանի իշխան>> ՓԲԸ-ի հաշվին 2016 թվականին Սևանա լիճ է բաց թողնվել շուրջ մեկ միլիոն մանրածուկ: Այդ գործընթացը կշարունակվի, ու տարեկան լիճ բաց կթողնվի արտադրված մանրածկան 25 տոկոսը: Տարեկան կարտադրվի մոտ 200 տոննա 50 գրամանոց մանրածուկ: Այս պահին գործարանում առկա է 300 հազար մանրածուկ:

Սևանա լիճը կենսաբանական աղտոտումից կանխելու համար նախատեսված է անվճար կամ էժան գներով մանրածուկ հատկացնել նաև մարզում գործող ձկնաբուծարաններին, որոնք պետք է արտադրեն միայն Սևանի իշխանի ձկնատեսակներ:

Իրականացվում է <<Սևանա լճում ձկան և խեցգետնի պաշարների հաշվառում>> ամենամյա միջոցառումների ծրագիրը, որի համար ամեն տարի հատկացվում է 7.6 մլն ՀՀ դրամ:

Սևանա լճի մակարդակը շարունակում է բարձրանալ նախատեսված տեմպերով: Այսպես, լճի մակարդակը 2017 թվականի հունվարի 1-ի տվյալներով կազմում է 1900.47մ, որն անցած տարվա համեմատ բարձր է 28 սմ-ով: Ընդհանուր առմամբ՝ 2002 թվականի համեմատ լճի մակարդակը բարձրացել է շուրջ 4 մետրով:

Ջրածածկման ենթակա անտառածածկ տարածքներում ծառաթփային բույսերի մաքրման և հեռացման համար պետական բյուջեից ամեն տարի հատկացվում է մոտ 125 մլն. դրամ, որի ապոյունքում արդեն մաքրվել է ընդհանուր առմամբ 2200 հա. ծառաթփային տարածքներ, իսկ 2016 թվականին մաքրված տարածքները կազմել են մոտ 95 հեկտար:

Մեզանում հիմա առավել հրատապ և անհանգստացնող են անտառվերականգնման տեմպերը: Սևանի մակարդակի բարձրացման հետևանքով հատած անտառների վերականգնումը աստիճանաբար իրականացվում են տարբեր ծրագրերով, սակայն հիմնախնդիրը շարունակում է մնալ հրատապ ու արդիական՝ վերականգնվող անտառաշերտը տարածաշրջանում շարունակում է մնալ գրեթե աննշան:

Տեղական համայնքների համար կլիմայի փոփոխության նվազեցման և հարմարվողականության օգուտները ցուցադրելու նպատակով <<Անտառների և արոտավայրերի կայուն կառավարում>> ծրագրի շրջանակներում ԵՄ և ՄԱԶԾ Հայաստանյան գրասենյակի կողմից Վարդենիսի տարածաշրջանում իրականացվում է պիլոտային ծրագիր, որի նպատակն է՝ պահպանել լանդշաֆտները, էկոհամակարգերի բազմազանությունը և ամբողջականությունը: 2015-2016 թվականներին վերականգնվել են 1500 հա մարգագետնային արոտավայրեր և տնկվել ու լրացվել են 60 հա անտառներ Ծովակ, Արեգունի եւ Ծափաթաղ համայնքներում:

Չնայած <<Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի>> հետ համագործակցության ծրագրի շրջանակներում ավարտվել են Գավառի, Մարտունու, Վարդենիսի մաքրման կայանների, Սևան, Ջերմուկ, Գավառ, Մարտունի և Վարդենիս քաղաքների կոյուղագծերի շինարարության և վերականգնման աշխատանքները, որոնց արդյունքում կառուցվել է 22 կմ. կոյուղագիծ, շահագործման են հանձնվել Գավառի և Ջերմուկ քաղաքների մաքրման կայանները, որտեղ կատարվում է միայն մեխանիկական մաքրում, սակայն Գեղարքունիքի մարզի բոլոր քաղաքները և մեծ բնակավայրերը, որոնց ազդեցությունը մեծ է Սևանա լճի վրա, պետք է ունենան ֆիզիկաքիմիական (ակտիվ ջրերի չեզոքացման համար) և կենսաբանական մաքրման կայաններ: Հանգստյան գոտում առկա հանգստյան տները, հյուրանոցները, տուրիստական հանգրվանները, ինչպես նաև հասարակական սննդի օբյեկտները, որոնք գտնվում են իրար մոտ, պետք է համատեղ կառուցեն կենսաբանական կոմպակտ մաքրման կայաններ, ինչպես նաև պետք է վերագործարկվի Սևանի թերակղզի-Սևան քաղաք կոյուղատարի աշխատանքները: Պետք է հասնել այն բանին, որ բոլոր հանգստյան օբյեկտները ունենան սեպտիկ հորեր: Աշխատանքներ են տարվում՝ մշակելու և աստիճանաբար իրականացնելու Սևանի ավազանի խոշոր բնակավայրերի՝ ջրամատակարարման, կոյուղացման և կեղտաջրերի մաքրման համալիր ծրագիրը՝ առաջնահերթությունը տալով Գավառագետի ափերին գտնվող խոշոր համայնքներին /Նորատուս, Կարմիրգյուղ, Սարուխան և այլն/:

Սևանա լճի ջրի մաքրության, բնակավայրերի էկոլոգիական վիճակի վրա բացասական ազդեցություն է թողնում կոշտ կենցաղային և արտադրական

թափոնների հավաքման, տեղադրման և աղբավայրերի կառավարման խնդիրը: Այն պահանջում է աշխատանքների իրականացում մի քանի ուղղություններով՝ խոշոր բնակավայրերի հատակագծերով նախատեսված աղբավայրերի կառավարման պլանների մշակում, առաջնահերթ նվազագույն ներդրումներ պահանջող բարելավման և ցանկապատման աշխատանքների իրականացում, միջհամայնքային աղբավայրերի նախագծում և դրանց շահագործման համար տեխնիկական միջոցների տրամադրում, իրենց տեղադրման կարողությունները սպառած աղբանոցների և աղբավայրերի փակում և կոնսերվացում: Նախատեսվում է Կոտայքի մարզում կառուցել կոշտ կենցաղային թափոնների նոր աղբավայր, որտեղ կտեղափոխվի նաև մարզում գոյացող աղբը, որի համար համայնքներին կհատկացվի անհրաժեշտ քանակությամբ աղբախցիկներ, աղբի կոնտեյներներ, աղբահավաք մեքենաներ և այլն:

Մարզի տարածքում կան օգտակար հանածոների արդյունահանման 25 հանքավայրեր, ստորերկրյա հանքային ջրերի արդյունահանում՝ 4 ընդերքօգտագործում:

Անհրաժեշտ է իրականացնել Սևանա լճի ջրհավաք ավազանում հանքավայրերի շահագործման արդյունքում կուտակված թափոնների գույքագրում, դրանց վնասագործման միջոցառումների մշակում և զբաղեցրած տարածքների վերականգնում:

Հողաշինարարության և հողօգտագործման բնագավառում 2016 թվականին մարզի համայնքներում վարձակալության են տրամադրվել 58.8 հազար հա համայնքային և պետական սեփականություն հանդիսացող հողամասեր: 2017թ.հունվարի 1-ի դրությամբ հաշվարկված 166.6 մլն. դրամ վարձավճարի դիմաց գանձվել և մուտքագրվել է 152.0 մլն. դրամ վարձավճար /91.2%/:

2016թ մարզի 27 համայնքներում կատարվել են ուսումնասիրություններ պետական և համայնքային սեփականության հողամասերի օտարման, օգտագործման տրամադրման, հետ վերցնելու օրինականության ապահովման ուղղությամբ: Ստուգումների և ուսումնասիրությունների արդյունքները քննարկվել են մարզպետի խորհրդակցություններում և մարզխորհրդի նիստերում: Համապատասխան որոշումներում ու արձանագրություններում համայնքների ղեկավարների գործունեությանը տրվել է գնահատական և կոնկրետ ցուցումներ ու հանձնարարականներ՝ թերությունների վերացման համար: Տեսչական ստուգումների արդյունքում 2 համայնքների ղեկավարներ ենթարկվել են վարչական տուգանքների՝ 200 հազար դրամի չափով:

Հողերի օգտագործման սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի քննարկմանն է ներկայացվել բնակավայրերի գլխավոր հատակագծերի և հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների փոփոխության 26 առաջարկներ, որոնց տրվել են դրական եզրակացություններ:

Սահմանված կարգով փոխվել են Իրան-Հայաստան 220 և 400 կվ. էլեկտրահաղորդման օդային գծերի հենասյունների և կառուցման համար անհրաժեշտ հողամասերի նպատակային նշանակությունները:

2016թ. ընթացքում մարզի 30 համայնքներում օտարվել է 163 միավոր՝ 83.22 հա հողատարածք, որի արդյունքում համայնքների բյուջե է մուտքագրվել 63.81 մլն. դրամ: Օտարման միջին արժեքը կազմել է սահմանված նվազագույն մեկնարկային արժեքի 205 տոկոսը:

Հողերի քարտեզագրման ժամանակ թույլ տրված տարատեսակ անճշտությունների և սխալների պատճառով մի շարք համայնքներում /Ակունք, Գեղհովիտ, Լիճք, Լճաշեն, Ծովագյուղ և այլն/ առաջին պետական գրանցման աշխատանքները թերի են իրականացվել: Տվյալ համայնքները իրենց միջոցներով գործընթացը իրականացնել չեն կարող: Առաջարկվում է հողամասի չափագրման աշխատանքները կատարել պետական բյուջեի կամ այլ ծրագրերի միջոցներով:

Սեփականաշնորհման գործընթացի ժամանակ քաղաքացիները օգտվել են նաև գյուղատնտեսական արտադրական շենքեր-շինությունների սեփականաշնորհումից՝ իրենց զբաղեցրած հողատարածքներով, որոնց վրա 1993 թվականից հետո ընկած ժամանակահատվածում կառուցել են բնակելի տներ, որոնց օրինականացման համար գործող օրենսդրությամբ անհրաժեշտ է ծախսել մեծ գումարներ, ինչի պատճառով դրանց նկատմամբ իրավունքները մնում են չգրանցված:

Առաջարկվում է իրավական ակտերում համապատասխան փոփոխություններ կատարելու միջոցով խնդիրը կարգավորել:

Համայնքներում վարելահողերի /հատկապես մանր կտրտված/ մրցույթների արդյունքում կնքված վարձակալական պայմանագրերի պետական գրանցման գործընթացը թերի է իրականացվում, քանի որ հողամասերի քարտեզագրման և գրանցման համար պահանջվում են լուրջ գումարներ, երբեմն տասն անգամից ավել, քան այդ հողամասերի տարեկան վարձավճարներն են /Լճաշեն, Լուսակունք, Կարճաղբյուր, Գեղամավան, Ծովասար, Ծովագարդ և այլն/:

Քաղաքաշինության բնագավառում մարզի 92 համայնքներից հաստատված գլխավոր հատակագծեր ունեն 27-ը, մշակման և համաձայնեցման փուլում են ևս 7 համայնքների պարզեցված գլխավոր հատակագծերը: Հաստատված քաղաքաշինական փաստաթղթերի բացակայության կամ գոյություն ունեցող փաստաթղթերում ամրագրված հողամասերի գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ համայնքների ղեկավարներից ստացվել են 42 առաջարկություններ, որոնք սահմանված կարգով ուսումնասիրվել են, և դրանց տրվել է համապատասխան ընթացք:

ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2404-Ն որոշմամբ սահմանված կարգով ՀՀ միջպետական և հանրապետական նշանակության ավտոմայրուղիների պահպանողական գոտիներում համաձայնեցման են

ներկայացվել 4 հողամասի կառուցապատման առաջարկություններ, որոնք սահմանված կարգով ուսումնասիրվել են և համաձայնեցվել ՀՀ քաղաքաշինության նախարարության հետ:

Մարզի համայնքներում 2016 թվականի ընթացքում հաշվառվել են 91 շինարարության թույլտվություններ՝ անհատական բնակելի տների, օժանդակ շինությունների, հասարակական սպասարկման և արտադրական օբյեկտների շինությունների, ինժինեռական տարբեր ենթակառուցվածքների կառուցման և վերանորոգման համար: Հաշվառվել են 11 շինարարության ավարտման ակտեր:

2016թ. ՀՀ պետական բյուջեի միջոցներով սկսվել է Ջուլաքար համայնքի թիվ 2 միջնակարգ դպրոցի (100,0մլն դրամ), Սևան համայնքի մշակույթի տան (50,0մլն դրամ) հիմնանորոգման աշխատանքները, սկսվել և ավարտվել է Սևանի թիվ 1 հիմնական դպրոցի ջեռուցման համակարգի (58,0մլն դրամ) կառուցման աշխատանքները:

ՀՀ կառավարության որոշումներով հատկացված միջոցներով իրականացվել են հետևյալ ծրագրերը՝ «Մարտունու ծննդատուն» ՓԲԸ-ի հատակի վերանորոգում՝ 12 միլիոն 350 հազար դրամ, Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի մանկապարտեզի շենքի տանիքի հիմնանորոգում՝ 32 միլիոն 50 հազար դրամ, Գավառ քաղաքի կենտրոնական հրապարակի վերակառուցում՝ 19 միլիոն 800 հազար դրամ, Վահանի համայնքի հանդիսությունների սրահի վերանորոգում՝ 5 միլիոն 820 հազար դրամ: Հորդառատ անձրևներից տուժած Կարճաղբյուր համայնքի ներհամայնքային նշանակության ճանապարհների վերանորոգման նպատակով հատկացվել է 5 միլիոն դրամի կապիտալ սուբվենցիա:

Ճանապարհաշինության բնագավառում 2016 թվականի ընթացքում մարզում ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության պատվիրատվությամբ ՀՀ պետական բյուջեի միջոցներով իրականացվել են Երևան-Սևան-Իջևան միջպետական նշանակության ավտոճանապարհի 7կմ, Ճամբարակ քաղաքի Գարեգին Նժդեհ և Տիգրան Մեծ փողոցների 0.6կմ երկարությամբ ճանապարհի հիմնանորոգման աշխատանքները: Իրականացվել են նաև Սևան-Մարտունի-Գետափ միջպետական նշանակության ավտոճանապարհի 49-66-րդ կմ հատվածի անցանելիության ապահովման, Երևան-Սևան-Իջևան կմ67+500, Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման կմ23+700-կմ23+800 և Մ4-Սեմյոնովկա-Մ4 կմ7+685-կմ7+710 հատվածների փլված հենապատերի կառուցման, Մ4-Ճամբարակ-Դրախտիկ ճանապարհի կմ26+100 հատվածի քարաթափումների վերացման աշխատանքները: Նշված աշխատանքները իրականացնելու նպատակով ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 1009.2 մլն. դրամ, որի արդյունքում հիմնանորոգվել են 7.6կմ ավտոճանապարհներ, իրականացվել է 17 կմ ճանապարհի անցանելիության ապահովման աշխատանքներ և վերականգնվել են թվով 4 փլվածքներ:

Համաշխարհային բանկի միջոցներով 2016 թվականին մեկնարկել են Մարտունի-Վարդենիս-ԼՂՀ սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի 4.3 կմ

/Զուլաքար-Վարդենիկ հատված/, Երանոս-Ծակքար և Մարտունի-Վաղաշեն-Վարդենիկ 10.5կմ մարզային նշանակության ճանապարհների հիմնանորոգման աշխատանքները: 2016 թվականի ընթացքում նշված ճանապարհների վրա կատարվել է 1682.5 մլն. դրամի ներդրում, որի արդյունքում հիմնանորոգվել է 12 կմ ճանապարհահատվածներ: Մնացած աշխատանքները նախատեսվում է ավարտել 2017 թվականի հուլիս ամսին:

ՀՀ կառավարության որոշումներով Գեղարքունիքի մարզպետարանի պատվիրատվությամբ իրականացվել են Դարանակ-Ծափաթաղ 9կմ, Ձորավանք-Անտառամեջ 4.2կմ և Դպրաբակ-Կալավան 7կմ ճանապարհահատվածների կոպճապատման և անցանելիության ապահովման աշխատանքները, որի արդյունքում ներդրվել է 17.9 մլն. դրամ:

Ճանապարհների հիմնանորոգմանը զուգահեռ իրականացվել են նաև պետական նշանակության ավտոճանապարհների պահպանման, շահագործման և ձմեռային պահպանության աշխատանքներ, որի արդյունքում 2016 թվականին ներդրվել է 827.8 մլն. դրամ:

Այս ծրագրերի իրականացման արդյունքում 2016 թվականին ներդրվել է 3537.3 մլն դրամ:

Կրթության ոլորտում հաշվետու ժամանակահատվածում աշխատանքները նպատակաուղղվել են կրթության որակի բարձրացմանը, համակարգի արդյունավետ գործունեության ապահովմանը: 2016-2017 ուստարում մարզում գործում են մարզային ենթակայության 117 դպրոցներ՝ 89 միջնակարգ, 26 հիմնական, 2 տարրական, 1 հատուկ, իսկ ՀՀ կրթության և գիտության նախարարության ենթակայությամբ՝ 1 կրթահամալիր, 6 ավագ դպրոց, 1 հիմնադրամ: Աշակերտների ընդհանուր թիվը կազմում է 28710 (նախորդ ուսումնական տարում՝ 29132):

Համագործակցված աշխատանքի արդյունքում ապահովվել է դպրոցահասակ երեխաների ընդգրկումը ուսումնական հաստատություններ և, ըստ դպրոցների տնօրենների ու համայնքների ղեկավարների կողմից ներկայացված տեղեկատվության, մարզում չեն եղել հանրակրթությունից դուրս մնացած երեխաներ: Առանձնակի ուշադրություն է դարձվել սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դպրոց ընդգրկելու ուղղությամբ, որի արդյունքում շուրջ 200 երեխաներ ապահովվել են հագուստով և գրենական պիտույքներով ու հաճախել են դպրոց:

Անհրաժեշտ պայմաններ են ապահովվել հատուկ կրթության կարիք ունեցող երեխաների կրթության կազմակերպման համար, բարելավվել են նրանց ուսման, սննդի և գիշերելու խնդիրները: Որոշակի աշխատանքներ են կատարվել նաև ներառական կրթության ոլորտում: Ներկայումս ներառական կրթություն է իրականացվում մարզի 6 դպրոցներում, այդ թվում՝ Գավառի N 1 հիմնական դպրոցում ներառական կրթության շրջանակներում հաճախում են 20, Ճամբարակի N 1 հիմնական դպրոցում՝ 15, Կարմիրգյուղի N2 միջնակարգ դպրոցում՝ 24, Սևանի N 3 հիմնական դպրոցում՝ 5, Մարտունու N 2 հիմնական դպրոցում՝ 47 և Վարդենիսի N2 հիմնական դպրոցում՝ 4 աշակերտ, ընդամենը՝ 115 աշակերտ:

Մարզի դպրոցների աշակերտների միջին առաջադիմությունը կազմել է 99.56, որակը՝ 47,64 տոկոս: 12-րդ դասարանների 1690 շրջանավարտներ ստացել են միջնակարգ կրթության ատեստատներ: Մարզային ենթակայության հանրակրթական հաստատություններում աշխատում են 3877 մանկավարժներ, որոնցից շուրջ 85 տոկոսը՝ բարձրագույն մանկավարժական կրթությամբ: Աշակերտ-ուսուցչական դրույք հարաբերակցությունը 8.7 է, դասարանների միջին խտությունը՝ 18,4, մանկավարժական դրույքների թիվը՝ 2401.6: Բոլոր մանկավարժների աշխատավարձերը հաշվարկվել են օրենսդրությամբ սահմանված կարգով և վճարվել ժամանակին:

2016 թվականի ընթացքում առաջացած մանկավարժական թափուր տեղերը համալրվել են մրցութային կարգով և 39 դպրոցներում անցկացված մրցույթների, այդ թվում՝ կրկնակի մրցույթների արդյունքում նշանակվել են 48 ուսուցիչներ: Հանրակրթական տարբեր առարկաներից 2016 թվականին վերապատրաստվել և ատեստավորվորել են 580 ուսուցիչներ, մինչև այժմ տարակարգ են ստացել ընդամենը 52 ուսուցիչներ:

2016 թվականի ընթացքում ՀՀ Գեղարքունիքի մարզպետի որոշումներով, առաջադրող մարմինների առաջարկությունների համաձայն, կատարվել են 118 դպրոցների խորհուրդների 944 անդամների փոփոխություններ:

Տարվա ընթացքում կազմակերպվել են <<Լավագույն ուսուցիչ, տնօրեն, դաստիարակ>>, Հայ առաքելական եկեղեցու և ՀՀ ԿԳՆ կողմից համատեղ իրականացվող՝ 5 առարկաների գծով <<Տարվա լավագույն ուսուցիչ>>, <<Հայաստանում ռուսաց լեզվի լավագույն ուսուցիչ>>, <<Տարվա լավագույն գինվորական ղեկավար և լավագույն քաղաքացիական պաշտպանության շտաբի պետ>> մրցույթները:

Սահմանված կարգի համաձայն՝ կազմակերպվել են դպրոցականների առարկայական և շախմատի օլիմպիադաների ներդպրոցական, տարածքային և մարզային փուլերը, ՀՀ ԱԺ գավաթի խաղարկության, շառադրությունների մրցույթներ, նկարչական ցուցահանդեսներ, երաժշտական փառատոներ, ազգային տոներին, հոբելյանական տարելիցներին նվիրված հանդիսություններ, որոնք նպատակաուղղվել են սովորողների մեջ հայրենասիրության արմատավորմանն ու խորացմանը, ուսման որակի և արդյունավետության բարձրացմանը:

ՀՀ դպրոցականների առարկայական օլիմպիադաների տարածքային փուլին մասնակցած 2741 աշակերտներից 432-ը հանդես են եկել մարզային փուլում, իսկ հանրապետական փուլին մասնակցած 72 աշակերտներից 5-ը ստացել են դիպլոմներ, 8-ը՝ գովասանագրեր, իսկ <<ՆՁՊ>> առարկայից՝ 1 առաջին կարգի, 2 երկրորդ և 1 երրորդ տեղերի մրցանակներ, մարզի թիմը հանրապետությունում գրավել է երկրորդ տեղը:

ԱԺ գավաթի խաղարկության եզրափակիչ փուլում մարզի հավաքական թիմը, որում ընդգրկված էին Գավառի N2 միջնակարգ դպրոցի 4-րդ, Մարտունու N1 հիմնական դպրոցի 5-րդ և Մարտունու N2 հիմնական դպրոցի 6-րդ դասարանների աշակերտները, արժանացավ 3-րդ մրցանակի և գավաթի:

Կազմակերպվել և անցկացվել են տարաբնույթ միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, ինչպես նաև հիշատակի՝ Հայոց Մեծ եղեռնի և 1988թ. երկրաշարժի

գոհերի հիշատակի օրերին: Մարզի բոլոր ուսումնական հաստատություններում և համայնքներում առանձին ոգեկոչմամբ են իրականացվել Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակին նվիրված միջոցառումները: Կազմակերպվել և անցկացվել են Մայրենի լեզվի օրվան, Հայոց բանակի ստեղծման տարելիցին, Հայրենական մեծ պատերազմում տարած հաղթանակի, ՀՀ Սահմանադրության օրվան :

<<Մեր մեծերը>> ծրագրի շրջանակներում 2016 թվականին իրականացվել են Վահե Հայկին, Գրիգոր Խանջյանին, Գրիգոր Զոհրապին, Սրբուհի Տյուսաբին և Ավետիս Ահարոնյանին նվիրված միջոցառումները:

Մարզում 14 անչափահասների կողմից կատարված իրավախախտումների վերացման նպատակով հանրակրթական հաստատություններում, ըստ միջոցառումների ծրագրի, դասղեկի ժամերի, դասարանական և ծնողական ժողովների, աշակերտական ինքնակառավարման մարմինների միջոցառումների, թեմատիկ ցերեկույթների, հանդիսությունների միջոցով քննարկվել են հասարակության համար վտանգավոր, մարդու իրավունքներն ու արժանապատվությունը ոտնահարող երևույթների անընդունելիությունը և այն դրականը, որն ապահովում է հասարակության առաջընթացը:

Համապատասխան աշխատանք է տարվել ջեռուցման ապահովման ուղղությամբ, որի արդյունքում հաստատությունները նախընտրած վառելիքով կազմակերպել են շենքերի ջեռուցումը. 66 դպրոց օգտագործել է գազ (անհատական կաթսայատան միջոցով), 8-ը՝ էլեկտրաէներգիա, 44-ը՝ հեղուկ վառելանյութ:

Աշխատանքներ են իրականացվել դպրոցները համակարգչային տեխնիկայով և տեղեկատվական տեխնոլոգիաներով վերազինելու ուղղությամբ, որի արդյունքում 125 դպրոցներ ունեն 1508 համակարգիչներ և համակարգչային սարքավորումներ, բոլոր դպրոցները միացած են ինտերնետ ցանցին: Համակարգիչներով դպրոցների ապահովվածությունը կազմում է՝ 19 աշակերտին 1 համակարգիչ:

2015-2016 եւ 2016-2017 ուստարվա դասագրքերի վարձավճարները 2016թ. դեկտեմբերի 30-ի դրությամբ գանձվել և մուծվել են 100 %-ով: Մարզում այժմ գործում են 46 նախադպրոցական հաստատություններ, որոնցում հաճախում են 3468 երեխաներ, իսկ 37 հանրակրթական դպրոցների նախակրթարաններում՝ շուրջ 1043 երեխաներ:

Կրթական համակարգն արդի չափորոշիչներին համապատասխանեցնելու համար ոլորտի առջև առկա են մի շարք հիմնախնդիրներ, այն է՝ դպրոցների հիմնական մասի ապահովում լաբորատոր սարքավորումներով ու նյութերով, ջեռուցման լոկալ համակարգի անցկացում, վերազինում համակարգչային ժամանակակից տեխնիկայով և սարքավորումներով, աշակերտական սեղան-նստարաններով, ուսոցչական սեղան-աթոռներով, սպորտային գույքով, հեռավոր և սահմանամերձ բնակավայրերում՝ ուսուցչի

թափուր տեղերը զբաղեցնելու համար բարձրագույն կրթությամբ մասնագետներով ապահովում:

ՀՀ Գեղարքունիքի մարզում գործող միակ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունը Գավառի պետական համալսարանն է, որն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթական ծրագրեր առկա և հեռակա ուսուցման հինգ ֆակուլտետներում: Համալսարանն ապահովված է պրոֆեսորա-դասախոսական անհրաժեշտ անձնակազմով, ուսանողներով, կիրառվում են ուսման ժամանակակից մեթոդներ ու տեխնոլոգիաներ: Ավելի քան 20 տարի ԲՈԻՀ-ն իրականացնում է ՀՀ Գեղարքունիքի մարզը բարձրագույն կրթությամբ մասնագետներով ապահովելու, մարզի սոցիալ- մշակութային զարգացմանը նպաստելու իր առաքելությունը:

Մշակութային և մարզական ոլորտում հաշվետու ժամանակաշրջանում մարզում գործել են 171 մշակութային օջախներ, որից 5-ը հանրապետական ենթակայության են, 2-ը՝ մարզային, 164-ը՝ համայնքային /այդ թվում՝ 73 մշակույթի տներ և ակումբներ, 69 գրադարաններ, 3 թանգարան, 1 թատրոն, 2 պատկերասրահ, 8 երաժշտական, 1 դուդուկի մասնագիտացված, 6 արվեստի, 3 գեղարվեստի դպրոցներ, 3 մանկական ստեղծագործական կենտրոն, 1 գեղագիտական կենտրոն և 1 երաժշտական քոլեջ/, որոնց գործունեությունը նպատակաուղղված է մարզում արվեստի և մշակութային ժամանակակից ենթակառուցվածքների զարգացմանը և մշակութային գործընթացների խթանմանը, ժողովրդական արվեստների և արհեստների պահպանմանն ու տարածմանը, երգի, պարի, կիրառական արվեստի, ասմունքի, կերպարվեստի, քանդակագործության և այլ խմբակների գործունեությանը: Մշակույթի օջախներում աշխատում են 1214 մարդ, հաճախում են 3398 աշակերտ: Մշակույթի տներին, հանրակրթական, երաժշտական և արվեստի դպրոցներին կից գործում են ազգագրական երգի-պարի, ժողգործիքների, թատերական 44 համույթներ: Կազմակերպվել և անցկացվել են բազմաթիվ միջոցառումներ՝ նվիրված պետական և ազգային տոներին, այդ թվում՝ Հայոց բանակի ստեղծման տարեդարձին, կանանց միջազգային օրվան, մայրության ու գեղեցկության տոնին, Շուշիի ազատագրման, հաղթանակի և խաղաղության, երեխաների իրավունքների պաշտպանության, Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, ՀՀ անկախության, ուսանողության և երիտասարդության, գրադարանավարի, տարեցների միջազգային օրերին: Հայաստանի Հանրապետության անկախության 25-ամյակի կապակցությամբ կազմակերպվել են 2000-ից ավել բազմաթիվ միջոցառումներ՝ Արցախյան ազատամարտի վետերանների մասնակցությամբ: Տեղական ինքնակառավարման համակարգի ներդրման 20-ամյակի կապակցությամբ տարաբնույթ միջոցառումներ են կազմակերպվել մարզի համայնքներում: Մարզում նշվել են նաև Հայոց Մեծ եղեռնի և 1988թ. երկրաշարժի անմեղ զոհերի հիշատակի օրերը: Աշխատանքներ են տարվել հայ մշակույթի և արվեստի, հասարակական-քաղաքական գործիչների հոբելյանների կազմակերպման և

անցկացման գործում: Մարզի տարածքում ավանդական տոների, ծեսերի, ուխտագնացությունների կազմակերպման գործում մարզպետարանը համագործակցել է մարզի մշակութային կազմակերպությունների, Գեղարքունյաց թեմի և հասարակական կազմակերպությունների հետ: <<Համբարձման տոնը>> նշվել է Գավառի արվեստի դպրոցում՝ Գեղարքունյաց թեմի աջակցությամբ: <<Վարդավառը>> նշվել է մարզի բոլոր համայնքներում: <<Գեղարքունիքի երկրագիտական թանգարան>> ՊՈԱԿ-ում անցկացվել է <<Սբ. Զատիկի>>, <<Համբարձման>>, <<Միջինք>>-ին նվիրված միջոցառումներ: <<Ծաղկագարդ>>-ը անցկացվել է մարզի նախադպրոցական ուսումնական հաստատությունների մասնակցությամբ: <<Խաչվերաց>> տոնի առթիվ մի շարք համայնքներում կազմակերպվել են ուխտագնացություններ: Մարզի տարածքում գտնվող պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման ուղղությամբ մարզպետարանը համագործակցել է պատմական միջավայրի պահպանության Գեղարքունիքի մարզային ծառայության հետ: Աշխատանքներ են տարվել պատմամշակութային հուշարձանների հաշվառման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգման և օգտագործման հարցերի շուրջ: Շարունակվում են մարզի վարչական տարածքում գտնվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանական գոտիների նախագծման և հաստատման աշխատանքները: Համայնքների ղեկավարների աջակցությամբ հուշարձանների տարածքներում կազմակերպվել են սանմաքրման և բարեկարգման աշխատանքներ: 2011 թվականից կառուցվում է «ՀՀ Գեղարքունիքի մարզի Լ.Քալանթարի անվան դրամատիկական թատրոն» ՊՈԱԿ-ի նոր շենք, որի պատճառով թատերախումբը իր գործունեությունը ծավալում է հարմարեցված շենքում և հանդիսատեսին է ներկայանում հյուրախաղերի միջոցով՝ մարզի տարբեր համայնքներում: Եթե թատրոն հաճախողների թվաքանակը մեկ ներկայացման հաշվով 2015թվականին կազմել է 118 մարդ, ապա 2016 թվականին այն կազմել է 123 մարդ, այսինքն աճել է 4,2%-ով:

Հայաստանի կինոգործիչների միության կողմից հայտարարված <<Կինոաշունի>> շրջանակներում Սևան, Ծովագարդ, Վարդենիկ և Ճամբարակ համայնքներում կազմակերպել և անցկացրել են հայկական ֆիլմերի, իսկ Գավառի մշակույթի տանը՝ Մայանի անվան թատրոնի կողմից ցուցադրված ներկայացման անվճար դիտումներ: ՀՀ մշակույթի նախարարության աջակցությամբ Սևան և Լճաշեն համայնքներում կազմակերպվել է Երևանի պետական կամերային թատրոնի հյուրախաղերը: <<Իմ Հայաստան>> համահայկական փառատոնի շրջանակներում Գավառ քաղաքի Ֆ.Դովլաթյանի անվան մշակույթի պալատում անցկացվել են Արգենտինայի <<Նաիրի>> պարային խմբի և հայ և արտասահմանցի դուդուկահարների մասնակցությամբ համերգներ:

ՀՀ Գեղարքունիքի մարզի 92 համայնքներից 11-ում գործում են 9 երաժշտական, 6 արվեստի և 3 գեղարվեստի դպրոցներ, որոնցում սովորում են շուրջ 2600 երեխա:

Գեղագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատությունների 66,7%-ը գտնվում է քաղաքային համայնքներում, որտեղ հաճախում է գեղագիտական կրթություն իրականացնող դպրոցներում ընդգրկված երեխաների 70,7%-ը: 2016 թվականին գեղագիտական կրթություն իրականացնող ուսումնական հաստատություններ հաճախողների թիվը 2011 թվականի համեմատ ավելացել է 15,9%-ով: Գեղագիտական դաստիարակության և գեղարվեստական կրթության որակի բարձրացման նպատակով <<Մշակութային կրթության աջակցություն>> հիմնադրամի հետ համատեղ կազմակերպվել են վարպետաց դասեր հանրապետության լավագույն մասնագետների ուժերով:

Մարզում գործող 9 մարզադպրոցներից 2-ը հանրապետական, 1-ը մարզային և 6-ը համայնքային ենթակայության են, իսկ 3 մարզադաշտերից 2-ը համայնքային ենթակայության են, 1-ը մասնավոր սեփականություն է:

Մարզադպրոցներում գործում է 156 խմբակ, աշխատում են 85 մարզիչ մանկավարժներ, հաճախում են 1806 մարզիկներ: 2016 թվականին 2015 թվականի հետ համեմատ մարզադպրոց հաճախողների թվաքանակը ավելացել է 3.7%-ով, կամ 65 մարդով:

Մարզի հավաքական թիմերը և մարզիկները մասնակցել են հանրապետական և միջազգային մրցումների: Կազմակերպվել և անցկացվել են շախմատի պատանիների և մեծահասակների, վոլեյբոլի մեծահասակների, բազկամարտի, ծանրամարտի, բռնցքամարտի կրտսեր, միջին և ավագ տարիքի պատանիների մարզային առաջնություններ, ինչպես նաև <<Ֆիզկուլտուրայի օր>>, <<Օլիմպիական օր>>, կրոսավազք, հեծանվավազք, հեծանվային արշավ, <<Գեղարքունյաց ձմեռ>>, <<Վարդավառ>>, սպորտլանդիաներ, մարզական փառատոն, մարզական-մասսայական միջոցառումներ:

Ազգային և պետական տոների կապակցությամբ համայնքներում անցկացվել են շախմատի, ֆուտբոլի, բռնցքամարտի, վոլեյբոլի, բասկետբոլի, թեթև ատլետիկայի, բազկամարտի մրցումներ: Տարբեր մարզաձևերից ազգային հավաքականի անդամներ են ընտրվել Տոնի Գալստյանը /բռնցքամարտ/, Տարոն Դումոյանը և Մերգեյ Սիմոնյանը /ազատ ոճի ըմբշամարտ/, Գարիկ Թորոյանը /ձեռքի գնդակ/, Բռնցքամարտիկ Սամվել Բարսեղյանը /Սևան/ ընդգրկվել է ՀՀ հավաքականի կազմում և մասնակցել Եվրոպայի և Աշխարհի առաջնություններին: Նախագորակոչային և գորակոչային տարիքի երիտասարդների հանրապետական ռազմամարզական խաղերի հանրապետական փուլում Ճամբարակի ավագ դպրոցի հավաքական թիմը գրավեց երկրորդ տեղը: Կազմակերպվել և անցկացվել է հանրակրթական դպրոցների 5-6-րդ դասարանների աշակերտների շրջանում սպորտլանդիայի մարզային առաջնություն:

ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական ընտանիք>> մրցույթի տարածքային փուլին մասնակցել են 180 մարզական ընտանիք: Եզրափակիչ փուլին մարզի թիմը գրավել է 4-րդ տեղը: Մարզի հավաքական թիմը լավագույն ձևով է հանդես եկել ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Հաշմանդամություն ունեցող լավագույն մարզիկ>> մրցույթում: ՀՀ Նախագահի մրցանակի համար <<Լավագույն մարզական նախադպրոցական հիմնարկ>> մրցույթի տարածքային փուլին մասնակցել են 22 մանկապարտեզների թիմեր: Մարզային փուլում հաղթած Գավառի N7 մանկապարտեզի թիմը մրցումների հանրապետական փուլում գրավել է 4-րդ մրցանակային տեղը:

Այս ոլորտի նվաճումները կարող էին լինել ավելին, եթե ինչ-որ չափով լուծված լինեին տարիներ ի վեր կուտակված մի շարք առանցքային հիմնախնդիրներ: Մարզում գործող 9 մարզադպրոցներում առկա է համապատասխան բարձրագույն մասնագիտական որակավորում ունեցող մարզիչ-մանկավարժների կարիք. առաջնային է մարզիչ-մանկավարժների համար վերապատրաստման դասընթացների կազմակերպումը: Ուսումնամարզական հավաքներ անցկացնելու համար մարզադպրոցների ֆինանսական միջոցները բավարար չեն:

Մարզում գործող 3 մարզադաշտերն էլ հիմնանորոգման կարիք ունեն: Համայնքներում առկա 128 պարզ տիպի մարզահրապարակներից 11-ը մասնակի վերանորոգվել են 2016 թվականին, սակայն քչերն են համալրված պարզ տիպի մարզասարքերով: Մարզական-մասսայական միջոցառումներ, մարզային առաջնություններ կազմակերպելու, մարզիկներին և մարզիչներին խրախուսելու, մարզից դուրս կազմակերպվող հանրապետական միջոցառումներին նրանց մասնակցությունն ապահովելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ պետական բյուջեից բավարար ֆինանսական միջոցներ տրամադրել մարզպետարաններին, ինչպես նաև ակտիվացնել աշխատանքները տեղացի գործարարների հետ՝ մարզական միջոցառումները հովանավորելու համար:

Մարզում գործող 73 մշակութային տների և ակումբների բնականոն գործունեությունն ապահովելու համար օրախնդիր հարցեր են շենքերի վերանորոգումը, ջեռուցման համակարգերով ապահովումը, ժամանակակից ձայնալուսային տեխնիկայի ձեռքբերումը: 69 գրադարանների շենքերի մեծ մասն ունեն հիմնանորոգման կարիք, առկա է նաև գրքային ֆոնդը նոր մասնագիտական և գեղարվեստական գրականությամբ, համակարգչային տեխնիկայով համալրելու խնդիրները:

Զգացվում է մշակույթի ոլորտի կադրերի պակաս, ինչպես նաև եղած կադրերի վերապատրաստման և վերաորակավորման անհրաժեշտություն: Ցածր են մշակույթի ոլորտի աշխատողների աշխատավարձերը: Հատկապես ոչ բարվոք վիճակում են գտնվում սահմանամերձ և բարձրալեռնային գյուղական համայնքներում գտնվող մշակույթի տների ու ակումբների մեծ մասը: Գեղարքունիքի

երկրագիտական թանգարանը և մարգային գրադարանն ունեն շենքային պայմանների բարելավման կարիք:

Տարածքային կառավարման բնագավառում հաշվետու ժամանակահատվածում մարզպետն իր իրավասության շրջանակներում իրականացրել է նկատելի աշխատանքներ: Օրենսդրությամբ սահմանված կարգով մարզի 31 համայնքներում իրականացվել է պետության կողմից համայնքներին պատվիրակված և պարտադիր լիազորությունների կատարման ընթացքի վերահսկողություն: Արդյունքները քննարկվել են մարզպետի նիստում և ընդունվել են համապատասխան որոշումներ, որոնք ներկայացվել են համայնքների քննարկմանը և ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցառումներ՝ դրանց կատարման ուղղությամբ: Այդ տեղեկանքներն ուղարկվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Մարզի ՏԻՄ-երի գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացվել է իրավական և մասնագիտական ոլորտներում:

Համայնքների բյուջեների սեփական եկամուտների 2016թ. կատարողականի ապահովման հարցերով կազմակերպվել են քննարկումներ: Հարցը քննարկվել է նաև մարզխորհրդի նիստերում:

Մեթոդական ու խորհրդատվական օգնություն է ցուցաբերվել մարզի բոլոր համայնքներին բյուջեների կազմման, նորմատիվ և այլ իրավական ակտերի ընդունման, հողի հարկի և գույքահարկի բազաների ճշգրտման, ՏԻՄ-երի որոշումների հրապարակայնության ապահովման, համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքի /հողեր, շենքեր-շինություններ/ տնօրինման օրինականության պահպանության, համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրերի մշակման, համայնքային ծառայության բնագավառում իրականացվող գործընթացների կատարման, /վերապատրաստումներ, ատեստացիաներ և մրցույթներ/, համայնքների բյուջեների սեփական եկամուտների ապահովման /հավաքագրման/ հարցերում:

Համայնքներում կազմակերպվել են մեթոդական և խորհրդատվական օգնություններ <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի պահանջների կատարման ուղղությամբ:

2016թ. մարզի 25 համայնքներում հայտարարվել են համայնքային ծառայության 40 մրցույթներ: Մրցույթների ժամանակացույցը կազմվել և ներկայացվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն: Մրցույթների արդյունքում պաշտոնների են նշանակվել 29 համայնքային ծառայողներ:

11 պաշտոնների մրցույթները, որոնք մեծ մասամբ կրկնամրցույթներ են, չեն կայացել դիմողներ չլինելու պատճառով:

Հիմնականում կրկնամրցույթներ հայտարարվել են համայնքների ղեկավարների աշխատակազմերի քարտուղարների և գլխավոր մասնագետների թափուր պաշտոնների համար:

2016թ. մարզի 2 համայնքներում համայնքային ծառայության թվով 3 պաշտոններ կրճատվել են: Մարզի 46 համայնքներում անցկացվել են ատեստացիաներ, որոնց արդյունքում ատեստավորվել են 96 համայնքային ծառայողներ:

Մարզի համայնքների ղեկավարների աշխատակազմերի համայնքային ծառայողներից 2016թ. ընթացքում հերթական վերապատրաստում են անցել 40 համայնքային ծառայողներ: Համայնքային ծառայողների վերապատրաստման գործընթացի նկատմամբ իրականացվել է պատշաճ վերահսկողություն և արդյունքները ժամանակին ներկայացվել են ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Մարզի համայնքներում աշխատանքային հարաբերությունների ձևավորման սահմանված կարգի խախտման դեպքեր չեն արձանագրվել:

Մարզի Գեղամասար, Ավազան, Նորակերտ, Շատվան, Արփունք, Գեղամաբակ, Զաղացաձոր և Սոթք համայնքներում ձեռնարկվել են միջոցներ համայնքներում կադրային գործի վարման նկատմամբ վերահսկողության շրջանակներում հայտնաբերված թերությունների վերացման ուղղությամբ և արդյունքների մասին ժամանակին իրազեկվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարությանը:

ՀՀ Գեղարքունիքի մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման պլանների, ծրագրերի մշակման կազմակերպման և իրականացման ուղղությամբ կատարվել են զգալի աշխատանքներ: Կատարելագործվել է մարզի աղետների ռիսկի նվազեցման ինստիտուցիոնալ բազան: Ղեկավարվելով աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության ծրագրի դրույթներով՝ համայնքներում տեղական մակարդակում աղետների ռիսկերի գնահատման մեթոդաբանությամբ կատարվել են ուսումնասիրություններ և կազմվել են «Աղետների ռիսկի նվազեցման պլաններ»: Մարզի 140 ուսումնական հաստատություններում մշակվել են «Աղետների ռիսկի նվազեցման և արտակարգ իրավիճակներում գործելու պլաններ»: Մարտ-մայիս ամիսներին ճշգրտվել են «ՀՀ Գեղարքունիքի մարզի Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության պլանը», «ՀՀ Գեղարքունիքի մարզի քաղաքացիական պաշտպանության պլանը», «ՀՀ Գեղարքունիքի մարզի բնակչության տարահանման պլանը», «ՀՀ Գեղարքունիքի մարզի տարահանված բնակչության կենսապահովման պլանը»

Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ու վերացման ծրագրերի իրականացման արդյունքում մի շարք տեղամասերում նվազեցվել է արտակարգ իրավիճակների առաջացման վտանգը: Թարմացվել է համապատասխան տեղեկատվական բազան, տարվել են

աշխատանքներ համապատասխան տեխնիկաների պատրաստականությունն ապահովելու ուղղությամբ: Տարվել են աշխատանքներ արտակարգ իրավիճակների հետևանքով տուժածների և պատճառված վնասի չափի արձանագրման ուղղությամբ, որոշ դեպքերում տուժածներին ցուցաբերվել է ֆինանսական աջակցություն: Ուսումնասիրվել են մարզի քարաթափումների, սողանքավտանգ և ջրածածկվող տարածքները, վտանգավոր կամուրջները, արհեստական պատվարներով ջրամբարները:

Մարզի տարածքում արտակարգ իրավիճակների կանխման, դրանց հնարավոր հետևանքների նվազեցման ծրագրերով իրականացվել են հետևյալ միջոցառումները.

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 01.12.2015թ. թիվ 318-Ա որոշմամբ հաստատվել է ՀՀ Գեղարքունիքի մարզում 2016 թվականի ընթացքում կանխատեսվող զարնանային հեղեղումների, սելավների, սողանքների, վթարային կամուրջների փլուզման և հնարավոր քարաթափումների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների ծրագիրը և առաջարկվել է համայնքներին՝ կատարել համապատասխան աշխատանքներ, որոնք հնարավորության սահմաններում իրականացվել են:

Ղեկավարվելով աղետների ռիսկի նվազեցման ազգային ռազմավարության ծրագրի դրույթներով՝ մարզի 5 համայնքներում կատարվել է աղետների նկատմամբ կարողությունների և խոցելիության գնահատում և կազմվել են «Աղետների ռիսկի նվազեցման պլաններ»: Ընդհանուր առմամբ այդպիսի աշխատանքներ իրականացված են մարզի 34 համայնքներում: Նախապես կազմված ծրագրերին համապատասխան մարզի համայնքներում կատարվել են արտակարգ իրավիճակների կանխմանն ուղղված հետևյալ աշխատանքները՝ Գավառ քաղաքում կատարվել է Գավառագետի 1000մ հատվածի հունի մաքրում եւ Հ. Աբրահամյան փողոցի հարակից հեղեղատարի հունի մաքրում 800մ հատվածում, Գանձակ համայնքում կատարվել է հեղեղատարի հունի մաքրում 450մ³ ծավալով և իրականացվել է 20մ ափերի ամրացման աշխատանք, Երանոս համայնքում կատարվել է հեղեղատարի հունի մաքրում 180մ հատվածում և իրականացվել են 440մ³ ծավալով դրենաժի և 250մ³ ծավալով հեղեղաջրերի հեռացման, առվակների մաքրման աշխատանքներ, Գեղիովիտ համայնքում Մարտունի գետի ափապատնեշի կառուցում 400 մ. Հատվածում:

Հունիսի 24-ին Կարճաղբյուր համայնքում գրանցված ջրհեղեղի հետևանքների վերացման համար ՀՀ կառավարության կողմից հատկացված միջոցներով վերականգնվել է 400մ. վնասված ջրատարներ, 900մ. ներհամայնքային գրունտային ճանապարհներ: Հայկական կարմիր խաչի ընկերության կողմից ջրհեղեղից տուժած 120 ընտանիքների հատկացվել է ֆինանսական և պարենային օգնություն:

Մարզում ստեղծված է քաղաքացիական պաշտպանության 10 ծառայություն: Հաշվետու տարում կատարվել են ՔՊ ծառայությունների պետերի կազմի

ճշգրտումներ՝ կապված պաշտոնային փոփոխությունների հետ: ՔՊ ծառայություններում առկա են կանոնադրությունները, ճշգրտվել են ՔՊ ծառայությունների քաղաքացական պաշտպանության պլանները և համապատասխան հաշվարկային ու տեղեկատվական փաստաթղթերը:

Մարզի ՔՊ ծառայություններում ստեղծված են ՔՊ կազմավորումներ, ճշգրտվել են դրանց տեխնիկայով և գույքով ապահովման հաշվարկները:

Ձեռնարկվել են միջոցառումներ մարզի արտակարգ իրավիճակներում գործող մշտական հանձնաժողովի գործունեությունը կանոնադրությանը համապատասխանեցնելու ուղղությամբ: Կազմակերպվել է ԱՌՆ մարզային թիմի աշխատանքները:

Ծառայությունների ղեկավար կազմը մասնակցել է ոլորտին վերաբերող սեմինարների, դասընթացների, ինչպես նաև հրամանատարաշտաբային և շտաբային ուսումնավարժությունների, որոնց ընթացքում ցուցաբերել են բավարար պատրաստվածություն: Մարզային փրկարարական վարչության կողմից Քաղաքացիական պաշտպանության ոլորտին վերաբերող, նախապես կազմված, թեմատիկ պլաններին համապատասխան մարտի 17-ին, հունիսի 16-ին, սեպտեմբերի 15-ին և նոյեմբերի 17-ին անցկացվել են հրամանատարական պատրաստության պարապմունքներ մարզի ՔՊ ծառայությունների շտաբի պետերի հետ:

Մարզի բնակչության տարահանման, պատսպարման կազմակերպման ուղղությամբ ապրիլ ամսին ճշգրտվել է մարզի տարահանման պլանը: Դրա համաձայն՝ անհրաժեշտության դեպքում տարահանում է նախատեսված մարզի սահմանամերձ՝ 29, սողանքավտանգ՝ 6, աղետալի ջրածածկման վտանգի 6 համայնքներից, ուժեղ երկրաշարժի ազդեցության գոտուց կախված հնարավոր էպիկենտրոններից՝ 30-39 համայնքներից: Այդ աշխատանքները կազմակերպելու համար մարզային տարահանման հանձնաժողովից բացի ստեղծված են նաև համայնքային տարահանման հանձնաժողովներ, տարահանման և ընդունման հավաքակալաններ, Ժամանակավոր տեղակայման կետեր, երկարատև բնակության կետեր: Մայիս ամսին ճշգրտվել է մարզի «Տարահանված բնակչության կենսապահովման պլանը»:

Մարզի պատսպարման պլանը ընդգրկված է քաղաքացիական պաշտպանության պլանում, որը մարտ ամսին ճշգրտվել է: Դրա համաձայն՝ մարզի բնակչության պատսպարումը նախատեսված է իրականացնել «Օդային տագնապ» ազդանշանով՝ մարզի ապաստարաններում, հակաճառագայթային թաքստոցներում և այդ նպատակի համար հարմարեցված նկուղներում ու հորերում: Նշված կառույցները հիմնականում բավարարում են մարզի բնակչության պատսպարումը իրականացնելուն: Հաշվետու տարվա ընթացքում կատարվել է նշված ապաստարանների և հակաճառագայթային թաքստոցների պահպանման վիճակի ուսումնասիրություններ:

Մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2016թ. հիմնական միջոցառումների պլանի համաձայն՝ ամբողջությամբ իրականացվել են ինչպես մարզպետարանում, մարզի համայնքներում և կազմակերպություններում նախատեսված քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության ոլորտի միջոցառումները, այնպես էլ՝ ՀՀ Արտակարգ իրավիճակների նախարարության կողմից պլանավորված այն միջոցառումները, որոնցում նախատեսված է եղել Գեղարքունիքի մարզային կառույցների մասնակցությունը: Մշակվել և հաստատվել է մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2017թ. հիմնական միջոցառումների պլանը:

Մարզում քաղաքացիական և բնակչության պաշտպանության միջոցառումների ղեկավարումն իրականացվում է հիմնական և պահեստային կառավարման կետերից: Մարզային և քաղաքային համայնքների համար նոր պահեստային կառավարման կետեր հիմնելու խնդիրը ներառվել է մարզի սոցիալ տնտեսական զարգացման 2017-2025 թվականների ծրագրերում: Նույն ծրագրում է ներառվել նաև մարզի ղեկավար կազմի և բնակչության ազդարարման համակարգի տեխնիկական վերազինման աշխատանքները: Ներկայումս մարզի ղեկավար կազմի ազդարարումն իրականացվում է հեռախոսներով, իսկ բնակչության ազդարարման համար տեղադրված են 43 շշակներ, որից 15-ը անսարք, որոնք աշխատեցվում են ձեռքով միացման ռեժիմով, սակայն անհրաժեշտ է 117-ը միացնել կենտրոնացված ազդարարման համակարգին: Հաշվետու տարվա ընթացքում կատարվել է առկա շշակների աշխատունակության ստուգումներ:

Քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության թեմաներով հրամանատարաշտաբային, շտաբային, հատուկ տակտիկական և օբյեկտային ուսումնավարժությունների կազմակերպման և անցկացման ուղղությամբ անցկացվել է «Բնակչության պաշտպանության կազմակերպումը Այգուտ և Դպրաբակ համայնքներում սողանքների ակտիվացման ժամանակ» թեմայով մարզային շտաբային ուսումնավարժություն, Ճամբարակ քաղաքում անցկացվել է «Փրկարարական աշխատանքների իրականացումը զենքի կիռաման հետևանքով վնասված բարձրահարկ շենքում» թեմայով ցուցադրական հատուկ տակտիկական ուսումնավարժություն:

Մարզի բոլոր 91 համայնքներում անցկացվել են շտաբային ուսումնավարժություններ քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության թեմաներով, իսկ մարզի 7 կազմակերպություններում անցկացվել են հատուկ տակտիկական ուսումնավարժություններ: Մարզի ուսումնական հաստատություններում անցկացվել են օբյեկտային վարժանքներ և դասախոսություններ՝ նվիրված ՔՊ միջազգային օրվան և ՀՀ ԱԻՆ աշխատակցի օրվան:

Մարզի դպրոցների 300 աշակերտների ընդգրկմամբ 15 խմբերում անցկացվել են երեսունժամյա դասընթացներ «Աղետներին դիմակայելու ունակությունների զարգացում» թեմայով:

Հասարակական կարգի ապահովման բնագավառում.

Մարզի տարածքում 2016թ. անցկացվել են ՏԻՄ-ի 66 ընտրություններ, որի ընթացքում ապահովվել է հասարակական կարգը և հասարակական անվտանգությունը:

2016թ. 12 ամիսների ընթացքում Գեղարքունիքի մարզում արձանագրվել է հանցագործության 745 դեպք, նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 653-ի դիմաց: Բացահայտման տոկոսը կազմել է 92.2 տոկոս՝ նախորդ տարվա նույն ժամանակահատվածի 92.0%-ի դիմաց: Մարզպետի կողմից տրվել են հանձարարականներ հանցագործությունների կանխարգելման, ինչպես նաև բացահայտման տոկոսի բարձրացման ուղղությամբ:

2016թ. մարզում հաշվառման մեջ են գտնվում 15 անչափահաս երեխաներ:

2016թ. անչափահասների կողմից կատարվել են 8 հանցագործության դեպքեր՝ նախորդ տարվա 10-ի դիմաց: Ոստիկանության ծառայողների կողմից ամենօրյա պրոֆիլակտիկ աշխատանքներ են տարվում անչափահաս երեխաների շրջանում և նրանց ծնողների հետ: Կազմակերպվել է քննարկում մարզպետի մոտ, որին հրավիրվել է մարզի դատախազը, մարզի ազգային անվտանգության ծառայության ղեկավարը, ոստիկանության մարզային վարչության պետը, մարզպետարանի բաժինների վարիչները, ուսումնական հաստատությունների տնօրենները, համայնքի ղեկավարները:

Մարզում ամառային զորակոչը անցկացվել է բարձր մակարդակով, բանակ են զորակոչվել նախատեսված 596-ի փոխարեն 635 զորակոչիկ: Զինակոչի օրերին զինկոմիսարիատների տարածքում ապահովվել է հասարակական կարգը, զորակոչից խուսափող անձինք հայտնաբերվել և ներկայացվել են համապատասխան զինկոմիսարիատներ:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ներդրման և զարգացման ոլորտում մարզի քաղաքային և 1000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղական համայնքների առնվազն 95 տոկոսում ներդրվել է համայնքային կառավարման տեղեկատվական համակարգը: Մարզի քաղաքային և 3000-ից ավելի բնակիչ ունեցող գյուղական համայնքները ունեն համացանցային պաշտոնական կայք, իսկ մարզի բոլոր համայնքներում առկա է համացանցին միացված առնվազն մեկ համակարգիչ: Մարզպետարանի համացանցային պաշտոնական կայքի թափանցիկության աստիճանը <<Ինֆորմացիայի ազատության կենտրոն>> ՀԿ-ի մոնիտորինգի կողմից օգտագործած մեթոդաբանությամբ գնահատվել է 81 տոկոս:

Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի ոլորտում

բաժինը Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքի (geggharkunik.mtad.am) վարման միջոցով ապահովել է մարզպետարանի տեղեկատվական քաղաքականությունը: Սույն գործընթացն իրականացվել է „Տեղեկատվության ազատության մասին,, ՀՀ օրենքի և այլ օրենքների ու իրավական ակտերի պահանջներին համապատասխան: Բաժնի գործունեության արդյունավետ իրականացմանը նպաստել է նաև բաժնի համագործակցությունը մարզային և հանրապետական ՋԼՄ-ների և քաղաքացիական հասարակության ներկայացուցիչների հետ:

Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում պարբերաբար և ըստ անհրաժեշտության իրականացվել է մարզպետի և մարզպետարանի կենսագործունեության վերաբերյալ հանրային իրազեկում՝ տեղեկատվական բնույթի նյութերի, մամուլի հաղորդագրությունների, ուղերձների, հաշվետվությունների, ծրագրերի, հայտարարությունների և այլ բնույթի նյութերի պատրաստմամբ և հրապարակմամբ: Հաշվետու ժամանակահատվածում բաժնի կողմից կազմակերպվել են մարզպետի մամուլի ասուլիսներ, մարզի համայնքներում հրատապ լուծում պահանջող հարցերի, ինչպես նաև սոցիալ - տնտեսական բնույթի տարբեր խնդիրների վերաբերյալ անցկացվել են հարցազրույցներ, տպագրվել հրապարակումներ: Բաժնի աշխատակիցները մասնակցել են մարզպետարանում հրավիրված կամ տարբեր կառույցների կողմից կազմակերպված վերապատրաստումներին, քննարկումներին և խորհրդակցություններին, մարզի զարգացման ռազմավարության մշակմանը, իրականացրել այլ գործառնություններ՝ ՀՀ Քաղաքացիական ծառայության մասին օրենքով իրենց վերապահված լիազորությունների սահմաններում:

Հաշվետու ժամանակահատվածում Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայքում հրապարակվել են քաղաքացիական և համայնքային ծառայության , ինչպես նաև մարզային ենթակայությամբ գործող կառույցների թափուր պաշտոնների համար հայտարարված մրցույթների և այլ թեմաների վերաբերյալ հայտարարություններ, տեղադրվել է մարզպետարանի աշխատանքային ծրագիրը, մարզպետի աշխատանքային գործունեությանը և մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծությանը վերաբերող հաշվետվություններ: Կազմակերպվել և անցկացվել է մարզպետի մամուլի երկու ասուլիս, ապահովվել է մարզպետի կողմից ընդունված բոլոր իրավական ակտերի հրապարակայնությունը: Մարզպետարանի պաշտոնական կայքում օրենքով սահմանված կարգով տեղադրվել են տեղեկատվական բնույթի նյութեր Գեղարքունիքի մարզի խորհրդի նիստերի վերաբերյալ: Բաժինն իրականացրել է ՀՀ Գեղարքունիքի մարզպետի՝ մարզի համայնքներ կատարած աշխատանքային այցերի, հանդիպումների, քաղաքացիների ընդունելությունների, մարզպետարանում անցկացվող բազմաբնույթ խորհրդակցությունների, քննարկումների, բանակցությունների, մարզ ժամանած ՀՀ և օտարերկրյա բարձրաստիճան պաշտոնատար անձանց և

պատվիրակությունների ացերի լուսաբանումը: ՀՀ Գեղարքունիքի մարզի համայնքների, մարզպետի և մարզպետարանի աշխատակազմի գործունեության հրապարակայնության ապահովման նպատակով բաժինն համագործակցել է մարզային և հանրապետական ՁԼՄ-ների հետ՝ պարբերաբար տրամադրելով անհրաժեշտ և հրապարակման ենթակա տեղեկատվություն:

2016 թվականին ՁԼՄ-ներից, հասարակական և տարբեր կազմակերպություններից, անհատ քաղաքացիներից ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանին հասցեագրված բոլոր գրավոր և բանավոր հարցումներին պատասխան է տրվել օրենքով սահմանված կարգով և ժամկետում, գրավոր հարցումները և դրանց պատասխանները տեղադրվել են մարզպետարանի պաշտոնական կայքի համապատասխան բաժնում: Կայքում տեղադրվել են մարզի համայնքների ղեկավարների և ավագանիների որոշումները, համայնքային բյուջետային եկամուտների՝ ամսեկան ու ծախսերի՝ եռամսյակային տվյալները, մարզպետարանի կողմից մարզի համայնքներում իրականացված վարչական հսկողության արդյունքների վերաբերյալ նյութեր, տեղեկատվություն մարզի ծնունդների, մարզպետարան հասցեագրված դիմումների, դրանց վիճակագրության, զարգացման ծրագրերի և հանրային իրազեկման ենթակա այլ նյութեր:

Մշակվել և աշխատակազմի ղեկավարի հաստատմանն է ներկայացվել բաժնի 2017թ. աշխատանքային ծրագիրը, իրականացվել են նաև ՀՀ օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով բաժնին վերապահված գործառնություններ: Հաշվետու ժամանակահատվածում հրատարակվել է „Գեղամա աշխարհ,, պաշտոնաթերթի 31 համար, ավելի քան 600 լրատվական բնույթի նյութ է թողարկվել „Արմենպրես,, լրատվական գործակալության միջոցով: Մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի կողմից 2016 թվականին մոտ 120 տեղեկատվական բնույթի տեսանյութ է ցուցադրվել Հանրային և մարզային հեռուստաընկերությունների եթերում, որտեղ արտացոլվել է մարզի համայնքների և մարզպետարանի կենսագործունեությունը :

Զորահավաքային նախապատրաստության ոլորտում իրականացվել են զորահավաքային նախապատրաստության, պաշտպանության և քաղաքացիական պաշտպանության բնագավառի իրավական ակտերի պահանջների կատարումը ապահովող աշխատանքներ: Համաձայն ՀՀ կառավարության 2016 թվականի հունվարի 20-ի N 18 – ԱԳ որոշմամբ հաստատված կարգի և ժամանակացույցի՝ պետությունը պատրաստականության բերման շրջանակներում 2016թ. մարտի 10-ին, մայիսի 26-27-ին և նոյեմբերի 11-ին անցկացվել են շտաբային ուսումնավարժություններ և ՀՀ պաշտպանության նախարարություն է ներկայացվել 2017 թվականի ուսումնավարժությունների ժամանակացույցը:

Համայնքների ղեկավարների հետ աշխատանքներ են տարվել՝ զինկոմիսարիատների հետ կապը ակտիվացնելու ուղղությամբ, զինապարտների հաշվառման գործընթացը ըստ պատշաճի կազմակերպելու համար: ՀՀ կառավարության և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի համապատասխան որոշումներով կազմակերպվել են 2016թ.ամառային և ձմեռային զորակոչերի հետ կապված աշխատանքները: 2010թ. մայիսի 27-ի N 657-Ն որոշման 17-րդ

կետի պահանջների համաձայն կազմվել և մարզի զինվորական կոմիսարիատներ են ներկայացվել մարզպետարանի զինապարտ աշխատակիցների անվանացանկերը՝ ըստ հաշվառման վայրի: Հիմք ընդունելով ՀՀ նախագահի 13.05.2016թ. ՆՀ- 424 –ՆՀԳ հրամանագիրը՝ ճշտված մեթոդաբանությամբ կազմվել և հաստատվել է <<Գեղարքունիքի մարզը խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման>> պլանը: Ելնելով անհրաժեշտությունից՝ փոփոխություններ են կատարվել մարզային զորահավաքային մարմնի կազմում: Մարզի քաղաքացիական պաշտպանության ծառայությունների թիվը ավելացվել է. <<Սննդի, առևտրի և նյութատեխնիկական ծառայությունը>> վերակազմավորվել և դարձել է երկու ծառայություն:

Բաժնի կողմից ճշգրտվել են զորահավաքային առաջադրանքներ ունեցող կազմակերպությունների հաշվարկային տարվա պլանները:

Պաշտպանության բնագավառի վարչական վերահսկողություն է իրականացվել մարզի 14 համայնքներում, որոնցում արձանագրված բացթողումները կամ լրացվել են տեղում կամ տրվել են ժամկետներ՝ դրանք շտկելու ուղղությամբ:

Սահմանված կարգով կատարվել են մարզպետարանի և ենթակա կազմակերպությունների համապատասխան պաշտոնյաների ամրագրումը: Մշտական վերահսկողություն է իրականացվել մարզի 3 համայնքներում այլընտրանքային աշխատանքային ծառայություն իրականացնող անձանց նկատմամբ և, ըստ պահանջի, տեղեկատվություն ներկայացվել ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն:

Առողջապահության և սոցիալական ապահովության բնագավառներում **2016**
թվականին մարզում գործել են 39 առողջապահական փակ բաժնետիրական ընկերություններ, 3 բժշկական կենտրոն, 2 պոլիկլինիկա, 1 ստոմատոլոգիական պոլիկլինիկա, 1 հիվանդանոց, 1 ծննդատուն, 1 առողջության կենտրոն, 30 ամբուլատորիաներ և առողջության առաջնային պահպանման կենտրոններ /ՊՈԱԿ –ներ/:

Մարզային առաջնային բժշկական օգնության անձնակազմն անցել է ընտանեկան բժշկության և բուժքույրերի վերապատրաստման դասընթացները:

2016 թվականի գլոբալ բյուջեն կազմում է 2 մլրդ. 835 մլն.

681 հազար 600 դրամ, ներկայացված կատարողականները ֆինանսավորվել են 100 տոկոսով:

Մարզի բոլոր առողջապահական ընկերությունները 2016 թվականի ընթացքում ապահովել են իրենց վրա դրված պետական պատվերի առաջադրանքները:

Զորակոչային և նախագորակոչային տարիքի արական սեռի անձանց բժշկական հետազոտման աշխատանքները մարզում ապահովել են 5 տարածաշրջանների բժշկական հանձնաժողովները, որոնք ապահովված են եղել բժշկական կադրերով և համապատասխան բուժսարքավորումներով:

Ծննդօգնության հավաստագրերի ներդրումից հետո բարձրացել է հղիների ընդգրկվածությանը և որակյալ ծննդօգնության իրականացումը:

Վերջին 9 տարում մարզում չեն արձանագրվել մայրական մահացության դեպքեր:

Աղյուսակ

Հ/Հ	Բովանդակություն	2016
1.	Ծնունդների թիվը	2357
2.	Պետպատվերով հիվանդների թիվը	10515
3.	Վճարովի ծառայությունների թիվը	6249
4.	Համավճար	345
5.	Ամբուլատոր հիվանդների այցերի թիվը	48127

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի կողմից պետական պատվերի միջնորդագիր է տրվել 99

մարդու: Վերականգնողական եւ առողջարանային բուժման ուղեգիր է հատկացվել

113 հաշմանդամի:

Մարզում բարձր ցուցանիշ է ապահովվել հավաքագրման գործընթացում /շուրջ 98 տոկոս/,

ընկերություններում ֆինանսական իրավիճակը կառավարելի է:

Սանիտարահակահամաճարակային իրավիճակը մարզում 2016 թվականին եղել է կառավարելի:

Տուբերկուլոզի դեմ պայքարը իրականացվում է տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ռազմավարական ծրագրով, որի արդյունքում նկատվում է տուբերկուլոզով հիվանդների թվի նվազում: Լայն թափ է ստացել դեղորայքակայուն հիվանդների հետազոտման և բուժման գործընթացը: Պրոֆիլակտիկ պատվաստումների գործընթացն իրականացվում է նախատեսված ծրագրով:

2016 թվականի ընթացքում ուսումնասիրվել է մարզի բնակչության սոցիալական վիճակը, ի

հայտ են բերվել խիստ կարիքավոր ընտանիքները, որոնց նկատմամբ կիրառվել են օգնության տարբեր ծրագրեր:

Աջակցություն է ցուցաբերվել գործազուրկների հաշվառմանը, կենսաթոշակառուների նկատմամբ կազմակերպվել է անհրաժեշտ խորհրդատվության տրամադրում:

Ամփոփվել են մարզի սոցիալական ոլորտի կազմակերպությունների ամենամսյա և տարեկան հաշվետվությունները՝ նախատեսված և փաստացի վճարվածը ընտանեկան նպաստի, միանվագ դրամական օգնությունների, կենսաթոշակառուների վերաբերյալ և ներկայացվել են ՀՀ կառավարություն:

Մարզի 233.000 ազգաբնակչության շուրջ 37.091 կենսաթոշակառուներ են, որից 15679-ը՝ հաշմանդամներ, 403-ը՝ զոհված ազատամարտիկների

և 21անհայտ կորած անձանց ընտանիքներ, 7800-ը՝ փախստական ընտանիքներ, որոնց հիմնական մասը ստացել է ՀՀ քաղաքացիություն, բռնի տեղահանվածներ՝ 2500, 7700-ը՝ աշխատանք փնտրող, որից 6557-ը՝ գործազուրկներ են:

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աջակցությամբ մարզի հաշմանդամ քաղաքացիներին հատկացվել են պրոթեզներ, օրթեզներ, հաշմանդամության սայլակներ, ձեռնափայտեր, լսողական ապարատներ և այլն:

2016թ. մարզում ընտանեկան նպաստ են ստացել 11.535 /միջին ամսեկան/

ընտանիք, սոցիալական նպաստ՝ 1711, իսկ միանվագ դրամական օգնություն՝ 737 ընտանիք: ՀՀ պետբյուջեից մարզի թվով 1847 առաջին դասարան հաճախող երեխաների տրվել է 46 մլն. 175 հազ. Դրամ օգնություն:

Մարզի Գավառ, Սևան և Ճամբարակ քաղաքներում գործում են բարեգործական 3 ճաշարաններ՝ 202 շահառուներով: Ավելի քան 746 կարիքավոր ընտանիքներ մարզպետի կողմից ստացել են դրամական օգնություն:

2016 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին պետբյուջեի հաշվին մարզի 307 առավել

անապահով, զոհված և վիրավոր ազատամարտիկների, ծնողազուրկ և բազմազավակ ընտանիքների երեխաներ անվճար կարգով հանգստացել են Հանքավանի մանկական ամառային հանգստյան ճամբարներում: Մարզի 6557 գործազուրկներից զբաղվածության 5 տարածքային կենտրոնների աջակցությամբ մշտական ախատանքի են տեղավորվել 284-ը:

2016թ. ընթացքում՝ ՀՀ կառավարության 09.06.2005 թվականի թիվ 947-Ն որոշման

համաձայն, ՀՀ ՊՆ-ից բնակարան ձեռք բերելու նպատակով անհատույց պետական

ֆինանսական աջակցություն են ստացել մարզի զոհված /մահացած/ կամ հաշմանդամ դարձած զինծառայողների /ազատամարտիկների/ թվով 3 ընտանիքներ:

Մարզի սոցիալական ոլորտի գերակա խնդիրներից են՝ նորածին երեխաների համա

ր վճարվող նպաստների բարձրացումը, սոցիալապես անապահով, ծնողազուրկ և

բազմազավակ /5 և ավելի անչափահաս երեխաներ/ ընտանիքներին բնակարանով

ապահովման խնդիրների կարգավորումը, հաշմանդամների ինտեգրմանն ուղղված

աշխատանքների ակտիվացումը, ծերերի խնամքի ցերեկային կենտրոնների ստեղծումը, ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհված կամ

հաշմանդամ դարձած զինծառայողների բնակարանային պայմանների բարելավումը,

ՀՀ սահմանների պաշտպանության ժամանակ զոհված կամ հաշմանդամ դարձած

զինծառայողների ընտանիքների, ինչպես նաև անաշխատունակ և տարեց

կենսաթոշակառուների արտոնությունների վերանայումը:

Ֆինանսների բնագավառում ՀՀ Կառավարության կողմից սահմանված կարգով ու ժամկետներում մշակվել են մարզային ենթակայության բյուջետային կազմակերպությունների 2016-2018թթ. միջնաժամկետ ծախսային ծրագրերը, բյուջետային հայտերի տեսքով դրանք խմբավորվել և ներկայացվել են համապատասխան նախարարություններ: ՀՀ կառավարության 2015թ. դեկտեմբերի 18-ի թիվ 1515-Ն որոշմամբ ներկայացվել են հանրակրթական դպրոցների՝ ըստ աշակերտների թվի /տարբերակված հարթավայրային, լեռնային և բարձր լեռնային, միևնույն բնակավայրում միակ, մինչև 400 աշակերտ ունեցող դպրոցների, ինչպես նաև հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունների և նախնական մասնագիտական ուսումնական հաստատությունների/ հաշվետու տարվա ճշտված ծախսերի անհատական և ամփոփ նախահաշիվները: ՀՀ ֆինանսների նախարարության կողմից տրամադրված մեթոդական ցուցումների համաձայն /ներառյալ ծրագրային բյուջետավորման ձևաչափերի/ կազմվել են բյուջետային հայտերը: Ապահովվել է մարզպետարանի մասնակցությունը մարզային ենթակայության բյուջետային կազմակերպությունների 2016թ. պահպանման ծախսերի նախահաշիվների կազմման, տնտեսագիտական դասակարգման հոդվածների փոփոխությունների կատարման, ինչպես նաև գանձապետական համակարգ-բյուջետային կազմակերպություն հարաբերությունների կարգավորման աշխատանքները, որոնք ամբողջությամբ կարգավորվել են Client-Tzeasury համակարգի միջոցով:

Տրվել են մեթոդական ցուցումներ համայնքների 2016–2017թթ. բյուջեների կազմման ուղղությամբ:

Կազմակերպվել են սեմինար-խորհրդակցություններ, տրվել են պարզաբանումներ և մեթոդական օգնություններ պետական բյուջեից հատկացվող միջոցների նախատեսման, նպատակային օգտագործման, ֆինանսական կարգապահության պահպանման հարցերի պարզաբանման վերաբերյալ:

Ժամանակին ապահովվել է ՀՀ կառավարության կողմից համայնքների գործունեությանը վերաբերող հրահանգչական նյութերի, ցուցումների և նորմատիվ ակտերի բազմացումը և համայնքներին տրամադրումը:

Ընտրանքային կարգով, ինչպես նաև մարզպետի կարգադրությամբ, բյուջետային կազմակերպություններում կազմակերպվել են ուսումնասիրություններ

ֆինանսական կարգապահության և պետական բյուջեից հատկացված միջոցների նպատակային ծախսումների ուղղությամբ:

2016թ.-ին ՀՀ պետական բյուջեից հանրակրթության, թատրոն-թանգարանի, երաժշտական դպրոցների ազգային նվագարանների, հատուկ կրթության, ինչպես նաև մարզպետարանի ապարատի պահպանման ֆինանսավորումներն ապահովվել են ամբողջությամբ և ժամանակին:

Ճանապարհների ձմեռային պահպանման և շահագործման համար նախատեսված 103500.0 հազ.դրամից ֆինանսավորվել է 101029.8 հազ.դրամ /97.60/օ-ով/, կամ պակաս է ֆինանսավորվել 2470.2 հազ.դրամ:

Կրթական օբյեկտների հիմնանորոգման համար նախատեսված 155139.0 հազ.դրամից ծախսվել է 138216.6 հազ.դրամ, /89.10/օ-ով/, կամ պակաս է ծախսվել 16922.4 հազ.դրամ:

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից տարբեր որոշումներով հատկացված 123720.0 հազ.դրամից ֆինանսավորվել է 96927.1 հազ.դրամ / 78.30/օ-ով/, կամ պակաս է ֆինանսավորվել 26792.9 հազ.դրամ:

ՀՀ պետական բյուջեից սուբվենցիա տրամադրելու նպատակով մարզի տարածքում տեղաբաշխված համայնքներից հավաքագրվել են համապատասխան հայտեր, ամփոփվել և ժամանակին ներկայացվել են ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացված միջոցների ընդհանուր ծախսը կազմել է 78.3 տոկոս:

Մարզի բոլոր համայնքները 2016 թվականի համար նախատեսված համահարթեցման դոտացիաները, ինչպես նաև լրացուցիչ դոտացիաները ստացել են ամբողջությամբ, մարզի միջինով համայնքային բյուջեի կատարման ցուցանիշները 2016 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ սեփական եկամուտների հավաքագրման մասով կազմել են 97.4 տոկոս:

Մարզի համայնքների համեմատական ցուցանիշները վկայում են, որ նույնանման առանձին համայնքներում սեփական եկամուտների հավաքագրումները կատարվել են բարեխղճորեն 100օ/օ և ավելի տոկոսով, մեկ ուրիշ դեպքում առանձին համայնքում ցուցանիշներն առավել ցածր են, քան կարող էին ապահովվել: Հաշվետու տարվա դեկտեմբերի 30-ի տվյալներով 100 և ավելի տոկոսներ են ապահովել թվով 49 համայնքներ, մարզի միջինից բարձր՝ մինչև 147.30/օ, ցուցանիշներ են ապահովել թվով 53 համայնքներ, մնացած 38 համայնքներում ցուցանիշները չեն գերազանցում մարզի միջինը և ապահովել են 46.2-ից 97,4 տոկոսի հասնող ցուցանիշներ, ինչը, բոլոր հարկատեսակների գծով վերցրած, ազդել է մարզի ընդհանուր բյուջեի կատարման վրա:

ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և պահանջվող ժամկետում կազմվել են մարզպետարանի և նրա ենթակայության կազմակերպությունների համար ապրանքների, աշխատանքների և ծառայությունների գնման տեխնիկական

բնութագրերը, ՀՀ ֆինանսների նախարարություն է ներկայացվել մարզպետարանի կարիքների համար գնվող ապրանքների, աշխատանքների ու ծառայությունների անվանացանկը՝ ՀՀ 2016թ. պետական բյուջեի համամասնություններում գետեղելու համար:

2016թ. բյուջեի համամասնությունները հաստատվելուց հետո կազմվել են գնման և վճարման ժամանակացույցերը, որոնք, գանձապետական համակարգի կողմից հաստատվելուց հետո, դարձել են գնման փաթեթներ:

Մարզպետարանի և ենթակա կազմակերպությունների կարիքների համար գնումները կատարվել են „Գնումների մասին, ՀՀ օրենքի, ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն և 2015 թվականի հունվարի 30-ի թիվ 105-Ն որոշումների պահանջներից ելնելով: Մարզպետարանի կողմից ՊՈԱԿ-ների կարիքների համար կազմակերպվող գնման գործընթացի շրջանակներում պարբերաբար անցկացվել են սեմինար-խորհրդակցություններ, տրվել են համապատասխան պարզաբանումներ:

Որոշ համայնքներում կատարվել են ուսումնասիրություններ՝ գնումների գործընթացը օրենքի պահանջներով կազմակերպելու համար:

Զարգացման ծրագրերի և վերլուծության բնագավառում 2016 թվականին ՀՀ Գեղարքունիքի մարզում աշխատանքներ են տարվել միջազգային դոնոր կազմակերպությունների հետ մարզի համայնքների առավել կենսական ծրագրերի առաջնահերթ իրականացման ուղղությամբ: „Համաշխարհային բանկ,-ի կողմից իրականացվող ծրագրի շրջանակներում կատարվել է ճանապարհների հիմնանորոգման և առողջապահական կազմակերպությունների շենքերի կառուցման աշխատանքներ: Ֆրանսիական <Բժշկական օգնություն եւ զարգացում>> կազմակերպության կողմից մարզում իրականացվել են գյուղական համայնքների բուժկետերի եւ բուժամբուլատորիաների վերանորոգման և վերազինման, ինչպես նաև բուժաշխատողների մասնագիտական վերապատրաստման ծրագրեր: Նույն ծրագրի շրջանակներում վերանորոգվել է Սևան քաղաքի Գազարին թաղամասի մանկապարտեզի բուժկետը: Համագործակցության շրջանակներում մարզում շարունակվում են ծրագրերի իրականացման աշխատանքները: „Վորլդ Վիժն Հայաստան, միջազգային բարեգործական կազմակերպության կողմից Գեղարքունիքի մարզում գյուղատնտեսության, կրթության, առողջապահության, համայնքային զարգացման և այլ բնագավառներում իրականացվել են բարեգործական մի շարք ծրագրեր: „Հայաստան Համահայկական հիմնադրամ, կազմակերպության կողմից Գեղարքունիքի մարզում ճանապարհաշինության բնագավառում ավարտին է հասցվել մարզի տարածքով անցնող Վարդենիս-Մարտակերտ ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները: <<Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկ/Եվրոպական ներդրումային բանկ/Եվրոպական միություն>>, <<Ասիական զարգացման բանկ>> կազմակերպությունների կողմից Գեղարքունիքի մարզում ջրահեռացման ջրամատակարարման, ինչպես նաև այլ բնագավառներում իրականացնում են մի շարք ծրագրեր:

ՀՀ Գեղարքունիքի մարզի և Ֆրանսիայի Հանրապետության Իզերի դեպարտամենտալ խորհրդի միջև պարբերաբար կնքվել են փոխշահավետ հարաբերություններ զարգացնելու պայմանագրեր և պայմանագրի շրջանակներում իրականացվում են նախապատրաստական ծրագրերը:

2016թ. հոկտեմբերի 29-ին ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանում կնքվել է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի և Ֆրանսիայի Իզերի դեպարտամենտալ խորհրդի միջև 2016-2018թթ. համագործակցության պայմանագիրը, որտեղ ընդգրկված են զբոսաշրջության, առողջապահության և ֆրանկոֆոնիայի ոլորտները, որոնք նպաստելու են Գեղարքունիքի մարզի սոցիալ-տնտեսական զարգացմանն ու փորձի փոխանակման խթանմանը: Համագործակցության պայմանագիրը նպաստելու է երկու երկրների վարչական միավորների հարաբերությունների զարգացմանը առողջապահության, գյուղական տուրիզմի, ֆրանսերենի ուսուցման ոլորտներում: 2016 թվականի հոկտեմբերի 14-ին ՌԴ Օմսկի մարզի և ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի ղեկավարությունների միջև կնքվել է համագործակցության համաձայնագիր: ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևան և Ֆրանսիայի Իզերի շրջանի Գրենոբլ քաղաքների միջև պարբերաբար վերակնքվել են քույր քաղաքների համագործակցության համաձայնագրեր: Համագործակցությունն ընթանում է 3 ուղղություններով՝ տուրիզմի զարգացում, առողջապահություն և ֆրանկոֆոնիա: ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս և Ֆրանսիայի Իզերի շրջանի Ռոման քաղաքների միջև պարբերաբար վերակնքվել են քույր քաղաքների համագործակցության համաձայնագրեր: Համագործակցությունն ընթանում է 3 ուղղություններով՝ տուրիզմի զարգացում, առողջապահություն, ֆրանկոֆոնիա: Համագործակցությունն այստեղ հիմնականում ընթանում է գյուղական տուրիզմի զարգացման ոլորտում:

ՌԴ Կրասնոդարի երկրամասի Նովոռոսիյսկ քաղաքում համագործակցության հուշագիր է ստորագրվել ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառ և ՌԴ Կրասնոդարի երկրամասի Նովոռոսիյսկ քաղաքների միջև: Համագործակցությունը շարունակվում է և նպատակ է հետապնդում՝ զարգացնել առևտրատնտեսական, մշակութային և զբոսաշրջության ոլորտները:

Մշակման ընթացքում է ՀՀ Գեղարքունիքի մարզի 2017-2025 թվականների տարածքային զարգացման ռազմավարությունը, որի գործընթացը կավարտվի նախատեսված ժամկետում և կներկայացվի ՀՀ կառավարության քննարկմանը:

Արդյունաբերության, առևտրի ու սպասարկման բնագավառներում Գեղարքունիքի մարզում 2016 թվականին գործել են 27 արտադրական ձեռնարկություններ: Խոշոր արտադրական ձեռնարկություններից մարզի տնտեսության մեջ էական կշիռ ունեն <<ԳեոՊրոՄայնինգ>> ,,,Աքվատիկ,, , ,,,Սևանի հացի գործարան,, ,,,Հրանդ Կարապետյան,, Ակունքի <<Էկոկաթ>>, ԼՃաշենի <<Արա-Արեգ>> եւ մի շարք այլ ընկերություններ: Գեղարքունիքի մարզում ՀՆԱ-ն 2015 թվականին 2011 թվականի հետ համեմատած աճել է շուրջ 34121,8 մլն դրամով կամ 15%-ով: Իսկ ՀՆԱ-ն մեկ շնչի հաշվով 2015 թվականին 2011 թվականի հետ համեմատած աճել է շուրջ 20%-ով:

Մարզի արդյունաբերական ձեռնարկությունների կողմից 2016 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ թողարկվել է շուրջ 24.2 մլրդ.դրամի արդյունաբերական արտադրանք, որը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի հետ համեմատած աճել է 110.6 տոկոսով, նույն ժամանակահատվածի հետ համեմատած որպես պատրաստի արտադրանքի իրացում՝ ընթացիկ գներով իրացվել է շուրջ 12.9 մլրդ.դրամի արտադրանք՝ ինչպես ՀՀ տարածքում, այնպես էլ ԱՊՀ երկրներում:

Մարզում գործում են 529 առևտրային ձեռնարկություններ, այդ թվում՝ 2 սպառողական ապրանքների և 2 գյուղատնտեսական արտադրանքի շուկաներ: Մարզում սպառողական շուկան կայուն է և 2016 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ ապրանքաշրջանառության ծավալը կազմել է 1.2 մլրդ.դրամ, որն իրականացվել է 2 սպառողական ապրանքների շուկաների միջոցով: Նախորդ տարվա համեմատությամբ մարզում առևտրային ձեռնարկությունների թիվն ավելացել է շուրջ 52-ով:

2016 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ մարզի սպառողական շուկայում մանրածախ ապրանքաշրջանառությունը (ընթացիկ գներով) կազմել է 15.1 մլրդ. դրամ: Մարզում բնակչությանը մատուցված վճարովի ծառայությունների ծավալների համեմատական ակտիվությունը 2016թ. հունվար-սեպտեմբեր ժամանակահատվածի տվյալներով կազմել է 10.7 մլրդ.դրամ, իսկ մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը հանրապետության միջինի նկատմամբ կազմել է 15.1 %:

Միջին ամսական անվանական աշխատավարձը ՀՀ Գեղարքունիքի մարզում 2016թ. օգոստոսի տվյալներով կազմում է 151 413 դրամ: Մարզում զբաղվածների թիվը արդյունաբերության ոլորտում՝ 1158 մարդ, առևտրի ոլորտում՝ 857 մարդ:

Մարզում սեզոնային շուրջ 586 նոր աշխատատեղ են բացվել շինարարության, ճանապարհաշինության և սեզոնային առևտրի բնագավառում:

Ղիմում-բողոքների և քաղաքացիների ընդունելության ոլորտում.

2017 թվականի հունվարի1-

ի դրությամբ մարզպետարանի աշխատակազմում մուտքագրվել է 1936 ղիմում, որի ց 87-ը՝ բողոք:

Մարզպետի կողմից կատարվել է 330 քաղաքացիների ընդունելություն: Քաղաքացիների ընդունելությունը

մարզպետարանում կազմակերպվել է յուրաքանչյուր ամսվա 2-

րդ շաբաթվա երեքշաբթի օրը, իսկ յուրաքանչյուր

ամսվա վերջին շաբաթվա երեքշաբթի օրը՝ մարզի մյուս տարածաշրջաններում:

769 քաղաքացի մարզպետարան է դիմել դրամական օգնություն ստանալու խնդրանքով: Սոցիալականաջակցության նպատակով 725 քաղաքացու տրամադրվել է դրամական օգնություն: Պետական պատվերի

շրջանակում բուժվելու խնդրանքով դիմել է 128 քաղաքացի, նրանցից 92-

ի խնդրանքը բավարարվել է:

Առողջարանային ուղեգիր ստանալու խնդրանքով դիմել է 144 քաղաքացի, որոնցից 112-ը ստացել են: Աշխատանք ստանալու խնդրանքով դիմել է 107 քաղաքացի, որոնցից 52-ը տեղավորվել են աշխատանքի: Բնակարանի խնդրով դիմել է 37 քաղաքացի, նպաստի խնդրով դիմել է 22 քաղաքացի: Առցանց համակարգով մարզպետարանի աշխատակազմ մուտքագրվել է 10520 գրություն և ելից է արվել 5245 փաստաթուղթ:

Ներքին աուդիտի աշխատանքները, համաձայն ներքին աուդիտի տարեկան ծրագրի, կատարվել են մարզի առողջապահական և կրթական կազմակերպություններում:

Աուդիտի են ենթարկվել կազմակերպությունների գործունեության տարբեր ոլորտները, այդ թվում՝ ֆինանսատնտեսական գործունեությունը, միջոցների օգտագործման արդյունավետությունը, աշխատավարձերի հաշվարկման և վճարման ճշտությունը, գնումների գործընթացի կազմակերպումը: Գնահատվել է ֆինանսական վիճակը, ներկայացված ֆինանսական հաշվետվությունների արժանահավատությունը և այլ հարցեր: Իրականացված աուդիտների ընթացքում գնահատվել են ներքին հսկողության և ռիսկերի կառավարման գործընթացների հուսալիությունը և արդյունավետությունը: Կազմակերպություններին տրվել են հանձնարարականներ և ներկայացվել են առաջարկություններ արձանագրված թերությունները և բացթողումները վերացնելու ուղղությամբ: Կազմակերպություններին տրամադրվել են խորհրդատվական ծառայություններ՝ իրականացվող ֆինանսատնտեսական բնույթի գործառնությունների և կառավարչական գործընթացների բարելավման համար:

Ընտանիքի, կանանց և երեխաների իրավունքների պաշտպանության ոլորտում 2016թ-ի ընթացքում ուսումնասիրվել են մարզում գենդերային հիմնահարցերը, իրականացվել է <<Գենդերային քաղաքականության և ընդդեմ գենդերային բռնության>> 2015թ-ի ծրագրերը, մշակվել է 2016թ-ի նույնանուն ծրագիրը:

Ոստիկանության համապատասխան ծառայությունների և ԽՀՀ-երի հետ համատեղ քննարկվել են մուրացիկ, թափառաշրջիկ, իրավախախտ, հանցագործություն կատարած անչափահասների խնդիրները, անհրաժեշտության դեպքում արվել են ուղղորդումներ համապատասխան հաստատություններ: Պրոֆիլակտիկ աշխատանքներ են իրականացնում իրենց երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող, հակասոցիալական վարքագիծ դրսևորող ծնողների հետ: Իրականացվել է հանրակրթությունից դուրս մնացած, այդ թվում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթական իրավունքի պաշտպանությունը՝ նրանց ներգրավելով հանրակրթական ուսումնական հաստատություններում: Ընդհանուր հաշվառման մեջ են գտնվում **14 իրավախախտ** երեխաներ: Ուսումնասիրվել են թվով 399 կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ, կատարվել են նրանց կարիքների գնահատում, ուսումնասիրման և գնահատման արդյունքների հիման վրա մշակվել են կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների սոցիալ-հոգեբանական վերականգնման անհատական

ծրագրեր եւ ապահովվել դրանց իրականացումը համապատասխան հաստատություններում: Մանկատներ են տեղավորվել 3 երեխա, որից 1-ը՝ մասնագիտացված մանկատուն: Մանկատնից դուրս են գրվել 5 երեխա: Կանխարգելվել է 5 երեխայի մուտքը մանկատուն: Երեխաների խնամքի և պաշտպանության գիշերօթիկ հաստատության ընդունելության նպատակով կատարվել է երեխաների և ընտանիքների ուսումնասիրություն, որի արդյունքում 4 երեխա դուրս է գրվել նշված հաստատությունից: Համապատասխան աշխատանքի և խորհրդատվության արդյունքում կանխարգելվել է 9 երեխայի տեղավորումը խնամքի հաստատություն: <<Նորք>> ավտոմատացված տեղեկատվական համակարգ են մուտքագրվել և փոփոխության են ենթարկվել թվով 34 կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաներ: Կատարվել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող **60** երեխայի վկայագրում: Բաժնի մասնագետները մասնակցել են խնամակալության եւ հոգաբարձության հանձնաժողովների նիստերին, որտեղ քննարկել են երեխայի հետ կապված հատուկ դեպքեր, լուծվել են առկա տարաձայնություններ՝ ծնողական իրավունքի իրականացման ընթացքում ծնողների կողմից փոխադարձ համաձայնության բացակայության դեպքերում՝ հաշվի առնելով երեխայի շահերը: Իրականացվել են երեխայի կյանքի պայմանների ուսումնասիրություն խնամքի հաստատություններում, հատուկ հաստատություններում եւ ներառական դպրոցներում: Ուսումնասիրվել են մարզի ԽՀՀ-երի գործունեություններ, կատարվել է խորհրդատվություն ԽՀՀ-ների աշխատանքների վերաբերյալ: Բաժնում կատարվել է մոտ 54 քաղաքացիների դիմումների ընդունում, որի ընթացքում տրվել են համապատասխան ընթացք, ցուցումներ և խորհրդատվություններ տարբեր հարցերի շուրջ՝ սոցիալական, հոգեբանական, մանկավարժական, իրավաբանական: Երեխաների իրավունքների պաշտպանության օրվա կապակցությամբ կազմակերպվել են այցելություններ Գավառի մանկատուն եւ խնամատար ընտանիքներ:

